

Խ. ՄԻՐԻՄԱՆՅԱՆ

ՀՈՂՆ  
ՈՒՆԲԱ

ԲԵՐՔԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

(ՊԱՏՄՈՒԱՆ ԱԿԴԱՐԿՈՎ)

ԱՐՄԱՆ

1940

ՏԵՐԵՎԱՆ

631.4

V-63

Лягушки в прудах  
окрест м. р. 210.

3526

Лягушки в прудах

окрест м. р. 210.

ՊՐՈԼԵՏԱՐՆԵՐ ԲՈԼՈՐ ՅԵՐԿՐՆԵՐԻ, ՄԻԱՅՆ.

631. 45

Մ-67

ԱՅԼԻՎԱՆ Է 1967

ՆՎԻՐՎՈՒՄ Ե ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ  
ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՍՏԱՏՄԱՆ  
XX-ԱՄՅԱԿԻՆ

ПОСВЯЩАЕТСЯ XX ГОДОВЩИНЕ  
УСТАНОВЛЕНИЯ СОВЕТСКОЙ  
ВЛАСТИ В АРМЕНИИ



АКАДЕМИЯ НАУК СССР—АРМЯНСКИЙ ФИЛИАЛ  
СЕКТОР ПОЧВОВЕДЕНИЯ

Х. МИРИМАНЯН

ПОЧВА И ЕЕ ПЛОДОРОДИЕ

(С ИСТОРИЧЕСКИМ ОЧЕРКОМ)

ИЗДАТЕЛЬСТВО АРМФАН-а  
ЕРЕВАН 1940

ԿԱՀՄ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ — ՀԱՅԱԿԱՆ ՖԻԼԻԱԼ

Հ Ս Ղ Ա Գ Ի Տ Ա Կ Ա Ն Ս Ե Կ Տ Ո Ր

631.4

Ա-67

Խ. ՄԻՐԵՄԱՆՅԱՆ

ՀՈՂՆ ՈՒ ՆՐԱ ԲԵՐՔԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

(ՊԱՏՄԱԿԱՆ ԱԿՆԱՐԿՈՎ)

~~3526~~

17739  
A

ԱՐՄՖԱՆ - ի ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

ՑԵՐԵՎԱՆ

1 9 4 0

Տպագրված է ԽՍՀՄ Գիտությունների Ակադեմիայի  
Հայկական Ֆիլիալի Նախագահության վորոշմամբ

## ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Խորհրդային մեր մեծ հայրենիքի լայնածավալ ամրող մակերեսը ծածկված է կուլտուրական գաշտերով և փարթամ, վարդու ծաղիկ հագած հովիտներով, կանաչազարդ մարդագետիններով ու թափափառ արոտներով, խիտ անտառներով ու ծաղկած այգիներով։ Մի տեղ այդ գաշտերում ծովի պես ծփում են ցորենի վոսկեգույն հասկերը, մի այլ տեղ սպիտակին և տալիս կնգուղներից դուրս թռած հասուն բամբակը։ Այստեղ ստվերախիտ այգիները տնքում են պտուղների առատ բերքի ծանրության տակ, այստեղ արեկ տակ շողջողում են խաղողի վողկույզները։ Մի տեղ մեր ուշադրությունն է գրավում մշտագալար, անթառամ բուսականությունը, մի այլ տեղ մեզ հրապուրում են խիտ ու խորհրդավոր անտառները։

Սոցիալիստական գաշտերի հերոսները յուրաքանչյուր հեկտարից հավաքում են մինչև 100 ցենտներ ցորեն ու բամբակ, 500 ցենտներ ճակնդեղ ու կարտոֆիլ, հարյուրավոր ցենտներ միրգ ու կանաչ խոտ։ Մեր անտառները, նույն տարածության վրա, տարվա ընթացքում միջին հաշվով տալիս են հարյուրից ավելի ցենտներ նոր նյութ։ Տաք ու խոնավ յերկրներում ընական բերքի քանակը լինում է ել ավելի բարձր։ Նման յերկրներում կան բույսեր, վորոնք մի հեկտարից տալիս են մինչև 2500 ցենտներ բերք... Բերգած թվերի մեջ դեռ չի մտնում տերենների, ցողունների, արմատների մասսան, վորը հաճախ բերքից շատ է լինում։ Այստեղից հարց է ծագում՝ ինչպես և հողն արտադրում այդքան մեծ մասսա, վորտեղից են ստացվում այդշափ բերքի համար անհրաժեշտ քանակությամբ նյութեր, ի՞նչ ձանապարհով և առաջանում այդ հսկայական պրոդուկցիան, վոր ամեն տարի տալիս է մեզ բնությունը։

Ամեն մի բույս, լինի նա ցորեն թե խնձորենի, բամբակ թե կաղնի, — կենդանի եյակ է, վորը ծլում է ու աճում, ապրում


ևու շնչում, սնվում եւ ու ծաղկում, բերք եւ ստեղծում ու սերունդ տալիս, վորից հետո մեռնում եւ ու անհետանում, քայքայիում եւ տարրալուծվում և այդ ճանապարհով նյութ ետալիս հետագա սերնդի՝ բուսական նոր կյանքի համար:

Բույսն իր կանաչ տերեների մեջ, արևի լույսի ազգեցության տակ, տարրալուծվում եռ ողից կլանած ածխաթթուն, վորը բաղկացած ե ածխածնից ու թթվածնից: Այդ տարրալուծման ընթացքում բույսն ածխածնը կլանում է, իսկ մաքուը թթվածնը վերադարձնում ե ողին: Տերեների մեջ, վորոնք բույսի լաբուտորիան են հանդիսանում, կլանված ածխածնից ու ջրից առաջանում են շաքար և ոսլա (կրախմալ): Բույսի տերեների մեջ այդ ճանապարհով ստացվում է առաջին հասարակ որգանական նյութը: Այսուհետեւ, բույսն իր արմատային ցանցի միջոցով, ջրի մեջ լուծված վիճակում, հողից ստանում է մի շաքար այլ սննդանյութեր, վորոնց ոգնությամբ և մասնակցությամբ շաքարն ու ոսլան վերամշակվում և վեր են ածխում ավելի բարդ որգանական նյութերի: Ահա այդ որգանական նյութերը հետզհետեւ կուռակվելով բույսի մեջ և ձևավորվելով՝ առաջացնում են այն, ինչ վոր մենք բերք ենք անվանում: Այս ճանապարհով ստացված բույսի արտադրանքը, լինի գա ճակնդեղ թե ցորեն, փայտ թե խնձոր, ըստ եյության հանդիսանում ե տարրեր նյութերից բաղկացած մի խառնուրդ, վորի առանձին տարրերն իրար հետ կապված են արևի եներգիայով: Խանութում հաց կամ շաքար, միրգ կամ վառելանյութ գնելով, ըստ եյության արևի եներգիայի պահածո (կոնսերվ) ենք գնում: Մարդու ստամոքսում կամ վառարանում այդ նյութերը քայքայվում են, տարրալուծվում, նրանց մեջ յեղած բաղադրիչ մասերը վեր են ածխում նոր ձևերի, իսկ արևի կապված ու թաքնված ջերմային եներգիան ազատվում է: Ահա արևի այդ աղատված եներգիայի հաշվին են տեղի ունենում մարդկանց շաբժումները, ձիու աշխատանքը, սենյակի տաքացումը, գնացքի ընթացքը, գործարանի մեքենաների շաբժումները և այլն, և այլն:

Որգանական նյութի ստեղծումը՝ արևի եներգիայի կոնսերվացումը, վորը յերկրագնդի վրա տեղի յե ունենում միմիայն կանաչ բույսի միջոցով և վորը մարդկության գրյության ու գործունեյության հիմքն ե կազմում, գլուղատնտեսության արտադրության հիմնական խնդիրն ե հանդիսանում:

Բույսն իր կանոնավոր աճման ու զարգացման համար մի կողմից պահանջում ե լույս և տաքություն, մյուս կողմից՝ սնընդանյութ և ջուր: Առաջին յերկուսը բույսի վրա ներգործում են անմիջապես, այն ժամանակ, յերբ ջուրն ու սննդանյութը, արամատների շնչառության համար անհրաժեշտ ողի (թթվածնի) հետմիասին բույսն ստանում է հողից: Միայն ածխածինն ե, վոր բույսը յուրացնում է ողից, նրա ածխաթթուն տարրալուծելու ձանալպարհով:

Այստեղից պարզ է, վոր հողագործության ու բերքատվության հիմնական խնդիրները ճիշտ պատկերացնելու համար անհրաժեշտ և լավ ծանոթ լինել հողային պայմաններին և բույսի հատկություններին ու պահանջներին: Յեթե մենք գիտենք, թե ինչպես և ինչնի են սնվում կուլտուրական բույսերը, ինչպիսի փոխարարերություն գոյություն ունի հողային պայմանների և բույսերի կենսական պայմանների միջև, այն ժամանակ կարող ենք համապատասխան ու կոնկրետ միջոցառութներով հողի մեջ ստեղծել այնպիսի միջավայր, վորը մեծ չափով պիտի նպաստի կուլտուրական բույսերի լավագույն զարգացմանը: Իսկ դա նշանակում է, վոր այդ գեպքում մենք կարող ենք ստեղծել բերքի անընդհատ բարձրացման համար անհրաժեշտ պայմանները:



## ՊԱՏՄԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ ԲԵՐՔԱՏՎՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

«Պետք է, առանց ուժերը խնայելու, ուստիմնասիրել կուլտուրական ժառանգությունը; Պետք է զիտենալ այն լրջորեն ու խորապես: Պետք է ոգտագործել այն ամենը, ինչ վոր տվել ե կապիտալիզմը և մարդկության նախընթաց պատմությունը, և այն աղյուսներից, վարոնիք ստեղծված են շատ դարերի ընթացքում մարդկային աշխատանքով, կառուցել ժողովրդի կյանքի համար հարմար, ընդարձակ, լույսով և արևով լի մի նոր շենք»:

Վ. Մ. ՄՈԼՈՏՈՎ (Համ Կ(ր)Կ

XVIII համագումարին տված գեկուցումբց):

Այն հարցը, թե ինչպես և ինչնի ե մնվում կուլտուրական բույսը, հարյուրավոր տարիների ընթացքում զբաղեցրել ե անթիվ-անհամար գիտնականների և գյուղատնտեսության բնագավառում աշխատող պրակտիկ գործիչների:

Դեռ շատ վաղուց՝ Հռոմում, հին Հայաստանում, Զինաստանում ու այլուր, յերկու հազարից ավելի տարի մեզանից առաջ, արդեն հայտնի յեր, վոր գոմաղը, փոշին, կիրը, թուչունների արտադրանքը գործածելու, գաշտ փոխարեւելու դեպքում հողի բերքը բարձրանում ե: Դեռ ավելին՝ հայտնի յեր, վոր թիթեռնածաղիկ բույսերը հողի մեջ հերկելուց հետո բերքն զգալի չափով ավելանում ե:

Աակայն, յերկու հազար տարի առաջ մարդկային մտքի զարգացումն այն աստիճանի վրա յեր գտնվում, վոր հին մարդիկ դեռ չելին կարողանում բացատրել բերքի բարձրացման պատճառները. նրանք լենթաղրում ելին միայն, վոր բույսի բերքը կախված է հողից, ջրից և տաքությունից:

Միջին դարերում պրակտիկ կյանքի բովից սկսում են արդեն յերեալ վորոշ աշխատանքներ, վորոնք հետզհետե բացահայտում են բույսի սննդառության գաղանիքը:

1563 թ. Բ. Պոլիսին գրում ե, վոր գոմաղբն ու պարատանյութերը պարունակում են բույսի բերքի համար անհրաժեշտ աղեր: Նա ասում է, վոր յեթե հողի մեջ այդ աղերն զգալի չափով պակասեն, ապա հողը կհրաժարվի հետագայում բերք տալուց: Մի քանի տարի շարունակ հողը մշակելուց հետո ստեղծվելու յե այդպիսի դրություն: Վորպեսզի հողը շարունակի բերք տալ, կամ պետք ե նրան պարարտացնել, կամ վորոշ ժամանակ անմշակ թողնել, վորպեսզի նա հանգստանա:

Հելմոնտն արդեն սկսում է վորձնական ճանապարհով պարզել այն խնդիրը, թե ինչնի և մնվում բույսը: Նա վերցնում է հողի մեջ տնկում ե ուռենու մի ճյուղ, վորին, բացի ջրից, ուրիշ վոչ մի նյութ չի տալիս: Մի քանի տարի աևող փորձից հետո նրա տնկած ուռենու ճյուղի քաշն ավելանում է 30 անգամ, իսկ հողը բոլորովին չի պակասում: Այդ փորձի հիման վրա 1629 թ. Հելմոնտը կարծիք է հայտնում, վոր բույսը միայն ջրով և մնվում: Ինքնըստինքյան հասկանալի յե, վոր ողի ու ջրի կազմի մասին այդ ժամանակ մարդիկ դեռ պարզ գաղափար չունեցին:

Գլաուբերը, Հելմոնտից 20 տարի հետո ավելի լայն փորձերի յե ձեռնարկում: Նա վերցնում է գոմից վոչ հեռող գանգած հողը, վորը, յերեխ գոմաղբի ազդեցության տակ,

վորոշ չափով սելիտրա յե պարունակել, և փորձից հետո գալիս ե այն յեզրակացության, թե բույսի զարգացման հիմքը կազմում ե սելիտրան:

1699 թ. Վուդվորդը Սնգլիայում տարբեր բույսեր աճեցնելով միայն ջրի մեջ, առանց հողի և վորեե սննդանյութի, պարզեց, վոր սովորական ջրում բույսը զարգանում ե, իսկ յերբ բույսին տրվում ե միայն մաքուր անձրևաջուր, նաև համարյա դադարեցնում ե իր հետագա աճը: Այդ պարզելուց հետո, Վուդվորդը սովորական ջրին արգեն վորոշ քանակությամբ հող ե խառնում, վորի հետևանքով բույսը զարգանում է ավելի լավ: Այսպիսով Վուդվորդը ապացուցեց, վոր միայն մաքուր ջուրը և, ընդհանրապես, ջուրը բույսի զարգացման համար դեռ բավական չե:

Դյուհամելլ ֆրանսիայում 1758 թ. կրկնելով Հելմոնտի փորձը, բայց ըույն աճեցնելով գետից վերցված ջրի մեջ, յեկավ հակառակ յեզրակացության, թե բույսը միայն ջուր ստանալով կարող է աճել: Իհարկե, այդ գիտնականը չգիտեր, վոր Մենա գետից վերցված ջուրը, վոր հոսում է մայրաքաղաքի (Փարիզի) միջով, բավական քանակությամբ սննդանյութեր և պարունակում:

1766 թ. Վալերիուսն ասում է, վոր հողի մեջ հայտաբերված աղերը նման չեն այն աղերին, վորոնք գտնվում են բույսի մոխրի մեջ ու դրա հիման վրա յեզրակացնում ե, վոր բույսելն իրենց համար անհրաժեշտ աղերն ստանում են ողից ու ջրից:

Հոմը 1756 թ. փորձնական ճանապարհով գտնում է, վոր բույսի զարգացման համար անհրաժեշտ է կալիում:

1789 թ. Ռուկերտը գրում է, վոր յերկարատև մշակումից հետո հողն ուժասպառ ե լինում ու նրա բերքատվությունն ընկնում ե: Այդ դրությունից խուսափելու

համար, հողին պետք ե տալ այնպիսի պարարտանյութեր, վորոնք պակասում են հողի մեջ.

1795 թ. Դունգոնալդը ցույց տվեց, վոր բույսի համար անհրաժեշտ են նաև ֆոսֆորային աղեր:

Յեթե բերված տարեթվերը չմնեյին, կարելի յեր կարծել, վոր խոսքը վերաբերում է 19-րդ դարի կեսերին, վորովհետեւ այստեղ արդեն բավական պարզ կերպով, իրականությանը մոտ տեղեկություններ են տրվում բույսի սննդառության վերաբերյալ: Բայց հետադայում փաստերը ցույց են տալիս, վոր այս նվաճումները բոլորովին մոռագության են տրվել:

Հոչակավոր քիմիկոս Զ. Պրիստլեյը 1772 թ. ուշադրություն դարձրեց այն բանի վրա, վոր կենդանիների շնչառության հետևանքով ողը «փչանում ե» և շնչառության համար անպետք դառնում: Փորձի միջոցով նա յեկավ այն յեղբակացության, վոր այդ ճանապարհով «փչացած» ողը բույսի ազդեցության տակ նորից թարմանում ե և պիտանի դառնում շնչելու համար: Սակայն, Պրիստլեյը գեռ չկարողացավ բացատրել նման յերկութիւնի ճիշտ պատճառը: Այդ գաղտնիքը բաց արեց հոլանդական հայտնի գիտնական Ինգենհառզը. նա 1779 թ. ապացուցեց, վոր բույսը «փչացած» ողը մաքրում ե միայն լույսի տակ և պարզեց, վոր բույսն ողի ածխաթթվից վերցնում ե և ողտագործում միայն ածխածին, իսկ մաքրուր թթվածինը վերադանում ե ողին: Դրա հետ միասին, Ինգենհառզը պարզեց, վոր ածխածնի յուրացման հետ մեկտեղ, վորը սննդառության պրոցես ե, բույսը շնչում է, այսինքն՝ շնչին քանակությամբ կլանում ե մաքրուր թթվածին և արտադրում ածխաթթու:

Դեռ 1775 թ. հոչակավոր Լավուազիեն վորոշելով ողի բաղադրիչ մասերը, պարզեց շնչառության ու այրման մե-

խանիզմը. այդ վերջինը շատ կարևոր եր բույսի զարգացման ընթացքը հայտարերելու համար:

Միաժամանակ Լավուազիեն պարզ կերպով ասում է, վոր բույսերն իրենց համար սննդանյութ ստանում են ողից, ջրից և ընդհանրապես «հանքային աշխարհից»: Այս ճշմարտությունը, վորի մասին Լավուազիեն գրել է դեռ 1774 թ., մայցել և անհայտ և յերեան և յեկել միայն նրա մահից հետո, 1860 թ.: Վոմանք կարծում են, վոր յեթե ժամանակին այդ միտքը հրապարակվեր, գուցե հետագայում կարիք չեր լինի կես դար աշխատանք թափել ու պայքար մղել, և բույսերի սննդառության հարցի ճիշտ լուծումը, համենայն դեպս, ավելի արագ տեղի կունենար:

Յենելով այն գործնական փաստից, վոր սև գույնի հողերը, վորոնք հարուստ են հումուս կոչված նյութերով, կամ վորոնք պարարտացվում են գոմաղբով, տալիս են բարձր բերք, վորոշ գիտնականներ 18-րդ դարի վերջերին և 19-րդ դարի սկզբներին սկսեցին ուժեղ կերպով տարածել այն կարծիքը, թե բույսերը սնվում են հողի այդ հումուսով կամ որդանական նյութով: Այդ կապակցությամբ գիտնականների մեջ առաջ յեկավ ուժեղ վիճականություն: Բեռլինի գիտությունների ակադեմիան 1800 թ. մրցանակ հայտարարեց՝ պարզելու, թե վնրտեղից և ստացվում բույսերի հանքային մասը: Այդ կապակցությամբ Շրադերը պարզեց, վոր բույսերն իրենք են արտադրում հանքային նյութեր և այդ պատճառով դրսից մուծելու կարիք չեն զգում:

Քիչ հետո, 1804 թ., Սոսսյուրն ստուգելով Շրադերի յեղակացությունը, ցույց տվեց, վոր առանց հանքային նյութի բույսը չի զարգանում: Նա ապացուցեց, վոր բույսի համար անհրաժեշտ ածխածնի մեծ մասը բույսը վերցնում է ողից և վոչ թե հողից: Դրա հետ միասին Սոսսյուրն

ընդգծեց, վոր հողի հումուսը պարունակում և նույն հանքային նյութերը, վորոնք անհրաժեշտ են բույսի համար և վորոնք գտնվում են նրա մոխրի մեջ:

Վորոշ գիտնականներ այլ գնահատական տվին հողի հումուսին, որինակ՝ Դեվին հումուսի վրա նայում եր իրեւ ածխածնի հիմնական աղբյուրի և կարծում եր, վոր բույսը մնվում է հումուսով: Դեվիի տեսակետը պաշտպանություն գտավ Շապտալի կողմից՝ ֆրանսիայում, Գագիերի կողմից՝ Իտալիայում և այլն: Բայց հումուսային սննդառության այդ տեսակետն ամենից լայն պաշտպանություն գտավ գերմանացի պրակտիկ գիտնական, գյուղատնտես Ալֆրեդ Թեյերի կողմից: Շնորհիվ վերջինիս համառության և լայն հեղինակության, այդ տեսակետը, թեորիան ընդհանուր հավանություն գտավ և այսուհետեւ բոլորն սկսեցին հողի հումուսը դիտել վորպես բույսի համար անհրաժեշտ մննդանութի, հատկապես ածխածնի, անմիջական աղբյուր:

Հումուսային թեորիան նորանոր հաջորդներ ձեռք բերելով լայն տարածվեց վոչ միայն Թեյերի հայրենիքում— Գերմանիայում, այլև Ֆրանսիայում, Անգլիայում, Մուսասա- տանում, Շվեյցարիայում: Այդ յերկրների գիտնականներից գոմանք, որինակ՝ Գրանդոն—Ֆրանսիայում, զարգաց- նում եյին միջանկյալ—որդանական-հանքային թեորիա, հողի հումուսին վերագրելով լոկ միջնորդի գեր: Իսկ վո- մանք ծայրահեղությունների մեջ ընկնելով, պնդում եյին այն տեսակետի վրա, վոր բույսը մնվում է միմիայն հողի որդանական նյութերով—հումուսով:

19-րդ դարի սկզբներին Յեվրոպայի աղդաբնակչու- թյունն ուժեղ կերպով աճում է, իսկ հողի բերքատվու- թյունն աստիճանաբար նվազում: Գյուղատնտեսությունը միջոցներ և վորոնում հողի բերքատվությունը բարձրաց- նելու համար: Հումուսային թեորիան և նրա տարածումը

գործին չեն ողնում: Այդ զբությունն ստիպում է գիտնականներին նորանոր հետազոտությունների դիմել, բերքի բարձրացման համար նորանոր ճանապարհներ փնտուել:

Գերմանացի գիտնական Շպրենգելը խորացնելով ու զարգացնելով Սոսայուրի փորձերը, յերկարատև ու համառաշխատանքից հետո, 1839 թ. յեկավ հակառակ յեզրակացության—նա ցույց տվեց, վոր բույսի համար վորպես մնունդ ծառայում են հողի մեջ յեղած հանքային նյութերը: Դրա հետ միասին նա ընդգծեց, վոր բույսերը հողից պետք ե լվանեն այն բոլոր նյութերը, վորոնք գանվում են իրենց կազմի մեջ: Սակայն Շպրենգելի այդ պատմական յեզրակացությունն ևս մնաց աննկատելի, և մնաց այն պարզ պատճառով, վոր այդ նոր թեորիան հիմնովին կործանում եր լայն չափով տարածված հումուսային թեորիան, իսկ ինքը՝ Շպրենգելն անհրաժեշտ ակախվություն չցուցաբերեց այդ գործում:

Նրանից հետո հանդես ե գալիս գերմանացի հոչակավոր գիտնական Յուստուս-ֆոն-Լիբիխը, վորն ամենայն իրավամբ կոչվում ե «գյուղատնտեսական քիմիայի հայր»: Նա 1840 թ. հրապարակում ե մեծ աղմուկ հանող իր աշխատությունը, նվիրված քիմիան հողագործության մեջ գործադրելու հարցին: Այդ գիրքը, վորը մեծ հետաքրքրությամբ կարդացվում ե նաև այսոր, զրված ե գեղարվեստորեն և հանրամատչելի ու հետաքրքրական լեզվով: Նրա եղերում Լիբիխն ամենախիստ կերպով քննադատում է իրեն ժամանակակից գիտնականների բոլոր աշխատությունները և անում մի շարք համարձակ յեզրակացություններ:

Շնորհիվ իր ակտիվ գործունեյության, բարձր վոճի և սուր քննադատության, Լիբիխը վոաքի հանեց իրեն ժամանակակից ամբողջ հասարակությանն ու բերքատվու-

թյան խնդիրներով շահագրգռեց այնպիսի խավերի, վորոնք առնչություն չունելին վոչ հողի և վոչ ել զյուղատնտեսության հետ կիբիսի քննադատության ամբողջ կրակն ուղղվում ե գլխավորապես հումուսային թեորիայի և նրա կողմանակիցների դեմ։ Նա հերքում ե բույսի սննդառության հումուսային թեորիան և ապացուցում, վոր բույսերը մնվում են հանքային նյութերով։ Հողի հումուսը նա դիտում ե իրեւ ածխաթթվի մի աղբյուր, վորը նպատում ե հողի մեջ յեղած ապառների քայլայման, նրանց հողմահարման։ Լիբիսի կարծիքով՝ հումուսն անմիջապես չի մասնակցում բույսի մննդառության գործում, բայց նա աչքաթող ե անում այն հարցը, վոր հումուսը պարունակում ե ազոտ, առանց վորի վոչ մի բույս չի կարող ապրել ու զարգանալ, ուրեմն և բերք տար Ազոտական թթվին լիբիսն ուշադրություն չի դարձնում, վորովհետեւ կարծում ե, թե հողի մեջ ազոտն ստացվում է ամիակից՝ թթվածնի հետ միանալու ճանապարհով։ Ուշադրության արժանի յե այն, վոր նման համարձակ յեզրակացություն նա անում եր այն ժամանակ յերբ բակտերիոլոգիան վորպես գիտություն դեռ գոյություն չուներ և հայտնի չեր, վոր ամիակը բակտերիաների միջոցով վեր և ածվում ազոտական թթվի։

Բույսերի՝ հանքային նյութերով մնվելու իր թեորիայի ոգտին լիբիսի մզած համառ ու կրակոտ պայքարը բավական թուլացրեց հավատը դեպի հումուսային թեորիան, բայց նա դեռ չկարողացավ վերջնականապես համոզել հումուսային թեորիայի կողմանակիցներին, վոր իր՝ լիբիսի թեորիան և ճիշտ։ Այդ հանդամանքը համառ պայքար ու մեծ վիճաբանություններ առաջ բերեց յերկու խումբ գիտնականների միջև։ այդ խմբերից մեկը սննդում եր հումուսային թեորիայի վրա, իսկ մյուսը, լիբիսի գլխավորությամբ, համառորեն պաշտպանում եր այն տեսակետը,

վոր բույսը մնվում ե հանքային նյութերով։ Նման գիտական պայքարի հանդեպ գյուղատնտեսությունը զործնական միջոցներ եր պահանջում բերքը բարձրացնելու համար։ Այդ խնդիրը լուծելու համար անհրաժեշտ եր վերջնականապես պարզել՝ ի՞նչպիսի նյութերով ե մնվում բույսը՝ հանքային, թե՞ որդանական։ Յեկ ահա, այդ խնդիրը համոզիչ կերպով պարզելու համար, գերմանական համալսարաններից մեկը մրցանակ ե հայտարարում։ Այդ մրցանակն ստացան յերկու գիտնականներ՝ Վիգմանը և Պոլստորֆը, վորոնց զանազան մննդանյութեր գործածելով՝ պլատինի փշրանքների և մաքուր ավազի վրա կարողացան աճեցնել կանոնավոր բույսեր և այդպիսով ապացուցեցին, վոր բույսը մնվում ե հանքային նյութերով, այսինքն վեճը լուծեցին հոգուտ Լիբիխի, հոգուտ հանքային թերորիայի։

Պատմական ճշմարտությունը պահանջում ե ընդգծել, վոր Լիբիխի անվան հետ կապված հանքային թերիան արդեն ձեռկերպվել եր Շալլենգելի կողմից ու յեղել վերջինի հետազոտությունների անմիջական արդյունք, իսկ առանձին, բավական ճիշտ նման տեսակետներ, ինչպես տեսանք, արտահայտվել են դեռ 18-րդ դարի յերկրորդ կեսերին։ Լիբիխը, Շալլենգելին հակառակ, իր ցայտուն խոսքի ու համառ պայքարի շնորհիվ, ստիպեց հասարակությանն ընդունել այդ թերիան։ Յեկ, այդպիսով, բոլորը յեկան այն յեղբակացության, վոր բույսը մնվում ե հանքային նյութերով բայց գլանից գյուղատնտեսությունը դարձյալ վոչինչ չշահեց։ Տիրող յեռադաշտյան սիստեմի պայմաններում հողի բերքատվությունն աստիճանաբար ընկնում եր։ Կանքը համառ կերպով պահանջում եր գրկել բերքը հետագա անկումից։ Յեկուպական գյուղատնտեսությունն իր հայացքն ուղղում եր դեպի Լիբիխը և նրանից սպասում փրկարար միջոցներ։

Լիրիին սկսեց դատել մոտավորապես հետեւյալ կերպ.  
հանքային այն նյութերը փորոնցով սնվում ե բույսը,  
առաջանում են ապառներից, օրանց հողմահարման հետեւ-  
վանքով. բերքը դաշտերում ընկնում ե այն պատճառով,  
փոք հողմահարման պրոցեսները թույլ են ընթանում և այդ  
կապակցությամբ չեն կարողանում լրացնել սննդանյու-  
թերի այն պաշտերը, փոք ամեն անգամ հողից դուրս ե  
տարփում բերքի միջոցով: Այստեղից Լիրիիը յեկավ այն  
յեղրակացության, փոք անհրաժեշտ է փոխել դաշտի մշակ-  
ման, մասնավորապես հերկի, յեղանակն այնպես, փոք հողի  
ավելի մեծ մակերեսույթ շփվի ողի հետ և, այդպիսով  
ուժեղանա հողմահարման պրոցեսը:

Լիրիի առաջազրած այդ խնդիրը տեխնիկապես լու-  
ծում ե անզիփական ինժեներ Բեյլին: Նա կառուցում է  
այնպիսի դութան, փոք հերկելու ընթացքում հողի շերտը  
կանգնեցնում է  $45^{\circ}$  թեքությամբ, այդպիսով ավելացնում  
է հողի մակերեսույթը և ուժեղանում է հողմահարումը:  
Սակայն հողի մշակման այդ յեղանակը նույնպես ցան-  
կալի արդյունքը չտվեց, բերքը չբարձրացավ: Դեռ ավե-  
լին՝ սննդանյութերի ուժեղ տարրալուծման հետևանքով  
փորոշ դեպքերում բերքն ավելի ընկավ: Չնայած ուղիղ  
հարյուր տարի յե անցել այն որից, յերբ Լիրիի կատա-  
րած փորձը բացասական հետևանք տվեց, այնուամենայ-  
նիվ մեր գյուղանտեսների մեջ դեռ այսոր ել կարելի յե  
հանդիպել ընկերների, փորոնք հողի փոչ բավարար բերքա-  
տվության պատճառը մասամբ կապում են «թույլ հողմա-  
հարման» հետ:

Լիրիին սկսեց փորոնել բերքատվության բարձրացման  
այլ ձանապարհներ: Նա հավաքեց բույսերի փոշու այն  
անալիգների տվյալները, փորոնք կատարվել ելին վալֆի  
լաբորատորիայում, լուրջ կերպով մշակեց դրանք և այդ

հիման վրա բոլոր կուլտուրական բույսերը բաժանեց յերեք խմբի. առաջին խմբին պատկանող բույսերը (հացահատիկները) պարունակում են մեծ քանակությամբ ֆոսֆոր. յերկրորդ խմբի բույսերը (տեխնիկական կուլտուրաներ, արմատապտուղներ) պարունակում են մեծ քանակությամբ կալիում. վերջապես, յերրորդ խմբին պատկանող բույսերը (թիթեռնածաղիկները) տարբերվում են նրանով, վոր պարունակում են մեծ քանակությամբ կիր:

Լիբիլսը, այդ տվյալներով զինված, պայքարի դուրս յեկավ յեռաղաշտային սիստեմի գեմ: Նա առաջարկեց ցանքաշրջանառության մեջ պարտադիր կերպով մտցնել տեխնիկական կուլտուրաներ ու խոտարույսեր և, այդպիսով, անցնել բազմագաշտյան սիստեմին: Իր այդ ազիտացիան լիբիլսը հիմնավորում եր հետեւյալ կերպ. միևնույն տեղում յերկար տարիներ հացահատիկ մշակելով մենք սպառում ենք հողի մեջ յեղած ֆոսֆորի պաշարը, և այդ այն ժամանակ, յերբ այլ մննդանյութերը, որինակ՝ կալիումը, կիրը, լիգ չեն ոգտագործվում: Կուլտուրաների հերթականություն սահմանելով և տարբեր պահանջի բույսեր մշակելով, հնարավոր ել լիովին ոգտագործել հողի մեջ գտնվող բոլոր տեսակի մննդանյութերը: Անա դրանից յեխնելով լիբիլսն առաջարկում ե հացահատիկների հետ ցանքաշրջանառության մեջ մտցնել թիթեռնածաղիկներ (սիսեռ, վոստ, բակլա), տեխնիկական կուլտուրաներ (ճակնդեղ, ներկատու բույսեր), կարսոֆիլ և այլն: Նման առաջարկները, ինարկի, բացարձակ նորություն չենին. կուլտուրաների հաջորդականությունը, թիթեռնածաղիկների բույսերի մշակումը, վորպես հողը բարելավելու միջոց, հայտնի ելին դեռ 2000 տարի մեզանից առաջ: Լիբիլսի խոշորագույն ծառայությունը զյուղա-

տնատեսության զարգացման գործում վոչ միայն այն ե, վոր նա հիմնավորել և առաջարկել ե հողագործության նոր յեղանակ, այլև այն, վոր նա համառ կերպով ու հետևողականորեն պայքարել ե իր այդ առաջարկները կյանքում լայն չափով կիրառելու համար։ Իերքատվության բարձրացման անհրաժեշտությունը, Իիրիխի վառ ագիտացիայի հետ միասին, գործը հասցըրել ե այնտեղ, վոր այն ժամանակիվ հասարակական գրեթե բոլոր խավերը, նույնիսկ ռազմական մարմինները, զբաղվում ե աջակցում եյին բազմադաշտ ցանքաշրջանառության ու բերքատվության բարձրացման համար անհրաժեշտ միջոցների գործնական կիրառմանը։ Այսպես, որինակ, այդ շրջանում գերմանական ռազմական մինիստրի կարգադրությամբ գերմանական բանակին պարտադիր կերպով տրվում ե սիսեռից պատրաստված յերշիկ (կոլրաստ)։ Նման կարգադրության միակ նպատակն ե յեղել այդ ճանապարհով բարձրացնել սիսեռի արժեքը և, այդպիսով, նպատակ նրա մշակույթի ծավալմանը ցանքաշրջանառության մեջ։ Հասուկ հրամանով ֆրանսիական բանակում սկսում են կարմիր անդրավարտիքներ (շալվարներ) և կապույտ գրատներ (շինելներ) գործածել, նպատակ ունենալով այս ճանապարհով ստիպելու, վոր գյուղատնտեսության ցանքաշրջանառության մեջ տեղ տրվի կարմիր և կապույտ ներկ տվող բուլսերի մշակմանը և այլն։

Իիրիխի այդ բոլոր միջոցառումները խոշոր նշանակություն ունեցան գյուղատնտեսության զարգացման գործում և, չնայած վոր գրանք վերջնականապես չլուծեցին բերքատվության բարձրացման խնդիրները, բայց ժամանակավորապես մեղմեցին գրանց սրությունը։ Հանքային թեորիայի հիման վրա Իիրիխը յեկավ

այն յեզրակացության, վոր բերքատվության բարձրացման հիմնական միջոցը հետեւյալն եւ արհեստական կերպով հողին վերադարձնել այն սննդանյութերը, վորոնք ամեն անգամ հողից դուրս են տարվում բերքի հետ միասին Լիբիխը սկսեց լայն չափով և նոր թափով քարոզել վոր յեթե այդ ճանապարհով հողի մեջ չմուծվեն բերքի հետ դուրս տարված հանքային սննդանյութերը և չլրացվի նրանց պաշարը, այն ժամանակ տեղի յեւ ունենալու անխուսափելի աղետ Ընկնելով ծայրահեղության մեջ, պատմության ընթացքում ազգերի և պետությունների հզուրացման ու անկման, նրանց ծաղկման ու կործանման պատճառը Լիբիխը համարում է այն, թե այդ պետություններն ու ազգերն ինչպես են վարվում հողի հետ—արդյոք պատճեմ են նրանք իրենց հողերի մեջ յեղած մննդանյութերի պաշարը, թե արհեստական կերպով **լրացնում են այն**

Լայն աղիտացիայից ու թեորետիկ դատողություններից Լիբիխն աստիճանաբար անցնում է դործնական աշխատանքին Առանձին կուլտուրանների համար նա պատրաստում է պարարտանյութերի հատուկ խառնուրդ, որինակ՝ «կարտոֆիլի հատուկ պարարտանյութ», «ցորենի հատուկ պարարտանյութ» և այլն: Միաժամանակ Լիբիխին հաջողվում է կազմակերպել քիմիական պարարտանյութերի առաջին գործարանը Գերմանիայում (Ոլենդորֆի գործարան): Նույն ժամանակաշրջանում Անգլիայում հիմնվում է սուպերֆոսիֆատի առաջին գործարանը (Լուզի գործարան)

Այդ շրջանում Լիբիխը գտնվում է իր փառքի ու հեղինակության գաղաթնակետին, նրա ճանապարհորդությունները հանդիսավոր տեսարանների յեն վերածվում: Նրա գրած բրոցյուրներն ու հոգվածները տարածվում ե

սպառվում են կայծակի արագությամբ: Լիբիխի պատրաստած «հասուլկ պարարտանյութեր»-ը բոլոր ճանապարհներով և շատ կարգով փոխադրվում են Յեվրոպայի մեկ անկյունից մյուսը: Գյուղատնտեսությունն այդ պարարտանյութերի գործադրումից սպասում է բերքի առաջնական բարձրացում: Գերմանական շաքարի գործարանների տերերը, վորոնք տնքում եյին անգլիական գաղութային յեղեգնից պատրաստվող եժան շաքարի մըցումից, Լիբիխի պարարտանյութերի հույսով սկըսում են թեավորվել: Բայց իրականում վրա հասավ գառն ու անսպասելի հիասթափություն—Լիբիխի պատրաստած պարարտանյութերը գործածելուց հետո բերքը դաշտերում չբարձրացավ: Պարզվեց, վոր այդ պարարտանյութերը չեն ներգործում: Լիբիխն իր պատրաստած պարարտանյութերը նախքան լայն ասպարեզ հանելը, չեր փորձում դաշտերում, ընական պայմաններում: Նրա հեղինակությունը Գերմանիայում վոչ մի կասկածի աեղիք չտվեց, բայց անգլիական ֆերմերներն այլ վերաբերմունք ունեցան Լիբիխի պատրաստած պարարտանյութերի հանգեց: Նրանք չհավատալով Լիբիխի պերճախոս դատողություններին, սկսեցին գործնականում ստուգել թե ինչ իսկական արժեք ունեն հոչակվող այդ պարարտանյութերը:

Անգլիական փորձադաշտերից մեկում, հայտնի Ռոտամստեդում, Լուդն ու Զիլբերտը 1843 թ. մի շարք փորձեր կատարեցին և այդ փորձերի միջոցով պարզեցին, վոր Լիբիխի պատրաստած պարարտանյութերը բերքը չեն բարձրացնում:

Անգլիական գյուղատնտեսական Ընկերության հերթական նիստերից մեկում, Ընկերության նախագահ Ֆիլիպ Պեղին, հենավելով Լուզի փորձերի բացասական

արդյունքների վրա, մեծ հարված հասցրեց Լիբիխին: Յեզ  
Լիբիխը, վոր իր վրա չեր դարձրել ամբողջ Յեվրոպայի  
ուշագրությունը, պարտվեց: Նրա նամակները, վորոնցով  
նա փորձում եր բացառքել իր պատրաստած պարարտա-  
նյութերի անհաջողության պատճառները, այս անգամ  
արդեն չելին տպագրում նույնիսկ շրջանային թերթերը...

Անհաջողության պատճառն այն եր, վոր Լիբիխը  
ֆոսֆորական թթուն տվել եր այնպիսի միացումների  
ձևով, վորոնք ջրի մեջ չեն լուծվում, և այդպիսով, բույր  
զրկվել եր հողի մեջ մուծված ֆոսֆորն ոգտագործելու  
հնարավորությունից: Բացի դրանից, թերագնահատելով  
ազոտի գերը, Լիբիխը ազոտ չեր մուծում իր այդ պա-  
րարտանյութերի խառնուրդի մեջ: Նա, ինչպես ինքն է  
կրում, վախենալով, վոր ֆոսֆորական թթուն անձրևաջրի  
մեջ կարող ե լուծվել և ջրի հետ տարվել հողից, դրան  
այնպիսի ձե ե տվել վոր մաս հողի մեջ: Այս պատճական  
վաստն իր նշանակությունը չի կորցրել նաև այսոր,  
քանի վոր այս կամ այն պարարտանյութը հողի մեջ  
մուծելու դեպքում հաճախ անհրաժեշտ խնամք չի տար-  
վում, վորակեսզի պարարտանյութերի հետ մուծվող անդա-  
նյութերը հեշտությամբ լուծվեն ջրի մեջ, այլ կերպ  
նրանք չեն կարող լիովին ոգտագործվել կուլտուրական  
բույսերի կողմից:

Լիբիխի գործունեյության այդ վերջին շրջանը պարզ  
կերպով ցույց տվեց, վոր իրականում բույսերի սննդա-  
ռության վերաբերյալ մի շարք ինդիրներ դեռ պարզ  
չեն, և այդ հանգամանքը հետագա լուրջ հետազոտական  
աշխատանք եր պահանջում: Լիբիխի այդ անհաջողու-  
թյունը գիտնականների համար նոր ուղեցույց հանդի-  
սանալով՝ նրանց մղեց դեպի ավելի խոր և բազմակող-  
մանի հետազոտությունների ուղին:

Հարկավոր եյին տասնյակ տարիներ և մի շարք լավագույն գիտնականների հակայական աշխատանք՝ պարզելու համար, վոր բույսերը սնվում են հանքային և այն ել լուծելի (և ռքսիդացած) նյութերով:

Այդ ինդիքն ընդհանուր ձեռվ լուծելուց հետո, գիտնականներն սկսեցին զբաղվել այն հարցով, թե ի՞նչպիսի հանքային նյութեր են պահանջվում բույսի համար և վորոնք են այն նյութերը, առանց վորոնց կուլտուրական բույսը չի կարող գոյություն ունենալ, աճել և բերք տալ: Առաջին հայացքից թվում ե, թե նման հարցն առանձին դժվարությունների հետ չի կապված: Բավական ե վերցնել վորոշ պայմաններում աճած ու զարգացած այս կամ այն բույսը և սովորական անալիզի միջոցով վորոշել նրա քիմիական կազմը: Սակայն այսուղ մի հարց ե ծագում՝ չե՛ կարող արդյոք հողի մեջ զտնվող, բույսի համար անպետք վորուել նյութ սննդառության համար անհրաժեշտ նյութերի հետ անցնել բույսի մեջ: Կատած չկա, վոր նման յերեսույթ կարող ե տեղի ունենալ և իրականում տեղի ունենում եւ:

Վորպեսպի կարելի լինի պարզել, թե ի՞նչպիսի սննդանյութեր են անհրաժեշտ բույսերին, առանց վորոնց անհնարին և նրանց նորմալ աճումն ու զարգացումը, գիտնականները նուրբ կերպով կազմակերպված բազմաթիվ փորձեր են կատարել: Տարբեր բույսեր են տնկվել վոչ թե հողում, այլ վորուել սննդանյութից գուրկ զանազան նյութերի մեջ: Որինակ՝ մաքուր ավազը, ապակու մանր փշրվածքը, ածուխը, մաքուր ջուրը բույսի համար անհրաժեշտ սննդանյութեր չեն պարունակում: Յեվ ահա փորձի յենթակա բույսերը տնկվել են նման ավազի կամ մաքուր ջրի մեջ ու վերջիններին արվել զանազան տեսակի սննդանյութեր, վորոնք գտնվում են, ինչպես լավ

հողի, աշնագես ել բուլսի մեջ։ Բազմիցս կրկնելով այդ փոք-  
ձերը, գիտնականներն ապացուցել են, վոր հողի և բուլ-  
սի մեջ յեղած նյութերի միայն մի մասն է անհրաժեշտ  
կուլտուրական բույսերի զարգացման համար։ Այդ ան-  
հրաժեշտ մննդանյութերի շարքին են պատկանում ազո-  
տը, ֆոսֆորը, կալիումը, կալցին, ծծումբը, մագնիումը,  
յերկաթը։ Սակայն հետազայում պարզվում է, վոր բուլ-  
սի համար միանդամայն անհրաժեշտ նյութերի թվին են  
պատկանում նաև մի շարք այլ նյութեր, վորոնք հողի  
մեջ գտնվում են չնչին քանակությամբ։

Յեթե վերցնենք մննդանյութերից բոլորովին զուրկ  
վորեւ միջավայր, որինակ՝ մաքուր ավազ, անբերբի հող,  
սովորական ջուր կամ ածուխի մանրունք, և այդ միջա-  
վայրին տանք վերենում թված մննդանյութերը (անհրա-  
ժեշտ քանակությամբ), միանդամայն հարավոր և ապա-  
հովել այս կամ այն բույսի լրիվ զարգացումն ու բեր-  
քառվությունը։

Բույսերի մննդառության ուսումնասիրության պատ-  
ճության առաջին շրջանում գիտնականները հաճախ մի  
ծայրահեղությունից ընկնում եյին մյուսի մեջ։ Դրա հետ  
միասին չտիրելով անալիզի կատարելագործված ու ճիշտ  
յեղանակին, նրանք հաճախ հանգում եյին սխալ յեղա-  
կացությունների։ Մասնավորապես, այդ վերաբերում ե  
հումուսի—իբրև մննդանյութի աղբյուրի—ինչը ինչ-  
պես վերենում տեսանք, լիբիխից առաջ գիտնականները  
հումուսը գիտում եյին վորպես բույսի հիմնական մնունդ,  
իսկ լիբիխի հանդես գալուց հետո, միանդամայն անտե-  
սում են այդ նյութի անմիջական գերը մննդառության  
գործում։ Բայց իբական կյանքը համառորեն պնդում է  
հանրածանոթ այն փաստի վրա, վոր հումուսով հարուստ  
հողերը, կամ այն հողերը, վորոնք անհրաժեշտ քանակու-  
թում,

թյամբ գոմաղբ կամ այլ որդանական պարարտանյութ են ստանում, շատ ավելի բարձր բերք են տալիս, քան հումուսով աղքատ հողերը։ Լիբէխի ժամանակ հաշվի չեյին առնում այն հանդամանքը, վոր հումուսն այրելուց հետո փոշու մեջ ստացվում են հենց այն բոլոր հանքային նյութերը, վորոնք իրրե մնունդ են ծառայում բույսի համար, այն ե՛ ֆոսֆոր, կալի, կալցի, և այլն։ Բացի զրանից՝ հողի հումուսը և ընդհանրապես որդանական նյութերը (զրանց թվում և գոմաղբը) պարունակում են մեծ քանակությամբ աղոտ, վորը, հումուսն այրվելու ընթացքում, ողն և ցնդում։ Յեկ յեթե նկատի ունենանք, վոր աղոտն այն ամենաթանգարին մննդանյութին ե, վորի պահանջն զգում ե բույսը շատ մեծ չափսի, պարզ կլինի հումուսի նշանակությունը բույսի մննդառության գործում։

Բավական յերկար ժամանակ մութ եր մնացել այն հարցը, թե վորտեղից և ինչպես ե բույսը հոգում աղոտի հանդեպ ունեցած իր մեծ կարիքը։ Մինչդեռ տաղանդավոր ինգենհանաուզն արագ կերպով պարզեց, վոր ածխածնի պաշարը բույսը վերցնում և վճար թե հողից, այլ ողի մեջ յեղած ածխաթթվից, վերջինի տարրալուծման ձանապարհով, աղոտի ինդիկին իր ամբողջությամբ յերկար ժամանակ մնում եր մթության մեջ։ Յեկ այդ պայմաններում տեղի յեն ունենում զանազան յենթազրություններ։ Դեռ հոչակավոր Լավուազիեյի 1775 թ. աշխատանքից հետո արդեն պարզ եր, վոր աղոտը, թթվածնի հետ խառը, հսկայական քանակով աղատ գրությամբ զանգում և ողի մեջ, վորտեղ նա կազմում և վերջինի  $80^{\circ}/\text{օ}^{\circ}$  Նման զրությունը հիմք տվեց գիտնականներին կարծելու, վոր բույսերն իրենց համար ամենաբարեշտ քանակությամբ աղոտն ստանում են ողի անծալքածիր ովկիանոսից։ Նույն կարծիքին եր նաև Լիբէխը, վորը, նկատի ունենալով աղոտի

այդ անսահման ու անսպառ աղբյուրը և ողի ամիսկի ոգտագործման իր լենթագրությունը, պարարտանյութերի մեջ ազոտ չմտցրեց և, ազդպիսով, մասամբ սխալ գործեց։ Ազոտի գաղտնիքը մնում էր շուծված մինչև 19-րդ դարի կեսերը, յերբ հանդես լեկավ ֆրանսիացի հայտնի գիտնական Բուսսենդոփն։ Նա բույսը տնկեց արհեստական կերպով պատրաստված, ազոտից միանգամայն գուրկ հողի մեջ և այդ ամբողջ փորձը տեղափորեց ապակյա մեծ զանգակի տակ։ Զանգակի մեջ անցկացրած խողովակի միջով ողը մաքրվում էր ազոտ պարունակող ամիսկի հետքերից և ապա մտնում զանգակի մեջ։ Նման պայմաններում դրսից զանգակի մեջ մուծվող ողը պարունակում էր միայն մաքուր ազոտ։ Բուսսենդոփնի այդ փորձերը ցույց տվին, վոր զանգակի տակ լեղած բույսերը քանի գնում նվազում են և, վերջապես, բոլորովին դադարում աճելուց։ Ամենայն նրբությամբ բազմաթիվ անդամ կրկնելով իր այդ փորձերը, Բուսսենդոփն ապացուցեց, վոր ողի մեջ ազատ դրությամբ լեղած ազոտի անսահման պաշարը կուտուրական բույսերի համար անմատչելի լի։

Հարցը նորից մնաց մութ։ Անհրաժեշտ էր փորսնել և գտնել նոր ճանապարհներ՝ լուծելու այն հարցը, թե վնրանքից և ինչպես ե բույսն ստանում իրեն համար անհրաժեշտ ազոտը։

Բուսսենդոփնի հետագա հետազոտությունները ցույց տվին, վոր բույսերն ազոտ ստանում են վոչ թե ողից, այլ հողից, արմատների միջոցով և այն ել վոչ թե ազատ վիճակում, այլ կապված աղերի ձևով։

Բուսսենդոփնի այդ կարեռը գյուտը գեռես շուծեց ազոտի խնդիրը։ Արտազը թյան պալմաններում կատարված բազմաթիվ դիտողություններն ու պրակտիկ գյուղատընտեսների փորձերը ցույց տվին, վոր մի քանի կուտուր-

բական բուլսեր հողից ստանում են ավելի շատ աղոտ,  
քան հողի մեջ այն մացվում ե պարարտացման ճանա-  
պարհովէ Մըուս կողմից՝ նույն փորձերը ցուց տվին, վոր,  
հակառակ Բուսսենգովի լեզրակացության, վաշ բոլոր բույ-  
սերն են տուժում և դադարեցնում իրենց աճը աղոտի  
պակասության գեղքում։ Դեռ ավելին՝ պարզվում ե, վոր  
ցանքաշրջանառության մեջ կան այսպիսի կուլտուրաներ,  
վորոնք վոչ միայն չեն տուժում, ալլև նույնիսկ ավել-  
լացնում են հողի մեջ լեզուծ աղոտի պաշարը։ Վերջապես  
հարսնի իւ դառնում, վոր վորոշ բուլսեր կամ բոլորովին  
անստարբեր են մնում հողի մեջ աղոտական պարարտա-  
նցութեր մուծելու հանգեալ կամ շատ աննշան չափով են  
աղզվում այդ պարարտանցութերից։ Ճիշտ նույն լեզրա-  
կացության լիկան նաև մի շարք գիտնականներ, վորոնք  
կրկնեցին Բուսսենգովի փորձերը։ Ահա այդ անվիճելի  
փաստերը նորից խառնեցին գիտնականների թեորիանները,  
հաշիվներն ու լենթազրութունները։ Մթությունը նորից  
պատեց աղոտի խնդիրը և առաջ քաշեց մի շարք նոր  
գիտնականներ, վորոնք զանազան ուղղությամբ նոր հե-  
տազոտություններ ձեռնարկեցին աղոտի գաղտնիքը պար-  
զելու համար։ Այս անգամ արդեն այդ խնդրի լուծումը  
վիճակված եր գերմանացի խոշոր գիտնական Հելլիգելին։

Հելլիգելը 1886 թ. Բեռլինի բնագետների համագուշ  
մարին ծանոթացրեց մի շարք տարիների ընթացքում  
կատարած իր փորձերի արդյունքներին և ապա հրապա-  
րակեց իր հոչակավոր աշխատությունը, վորը գլուղատըն-  
տեսական գիտության զարգացման պատմության մեջ նոր  
եջ բաց աբեց և վորը գլուղատնեսական արտադրությանը  
խոշոր գործնական ծառայություն մատուցեց։

Հելլիգելը գտավ, վոր Բուսսենգովի լեզրակացությու-  
նը և ճիշտ ե, և սխալ։ Մի շարք բուլսերի վերաբերլար

որինակ՝ ցորենի, վարսակի, նա ճիշտ է, իսկ թիթեռնա-  
ծաղիկ բույսերի, որինակ՝ սխենի, առվույտի, վորոնք  
ազոտի հանդեպ այլ վերաբերմունք ունեն—սխալ եւ Այդ  
խնդիրը պարզելու նպատակով Հելլրիգելը վերցրեց մի հոդ,  
վորը միանգամայն զուրկ եր ազոտ պարունակող նյութե-  
րից և այդ հոդը տաքացրեց մինչև  $70^{\circ}$  կամ, ինչպես  
ասում են, ստերիլիզացիայի լենթարկեց։ Նման գործո-  
ղություններից հետո այդ հոդի մի մասում՝ տնկեց թի-  
թեռնածաղիկ բույսեր, իսկ մյուս մասում հացահատիկ-  
ներ։ Փորձերը ցույց տվին, վոր լերկու գեղքում ել այդ  
լերկու տարբեր բույսերը միատեսակ տուժում են ազոտի  
պակասությունից։ Դրանից հետո Հելլրիգելը նորից վերց-  
րեց ազոտից զուրկ մի հոդ, բայց այս անգամ առանց  
տաքացնելու, առանց ստերիլիզացիայի լենթարկելու և  
նորից տնկեց՝ մի մասում թիթեռնածաղիկ, իսկ մյու-  
սում՝ հացահատիկ, այսինքն նույն բույսերը։

Այս անգամ արդյունքները լեզան անսպասելի, ուղ-  
ղակի շշմեցուցիչ։ մինչդեռ թիթեռնածաղիկ բույսերը  
հիմնալի աճում ելին ու զարգանում, հացարույսերը նվա-  
զում ելին և վերջիվերջո վոչնչանում։ Յելնելով այդ  
փորձերից, Հելլրիգելն սկսեց թիթեռնածաղիկ բույսերի  
վրա վորոնել հասուլ նշաններ և գտավ, վոր նրանց ար-  
մատների վրա կան բազմաթիվ գնդիկներ կամ, ինչպես  
ասում են, պալարներ, վորոնք բացակայում են հացազգի  
բույսերի վրա։ Նա նկատեց նաև այն, վոր հոդը մինչև  
 $70^{\circ}$  տաքացնելուց հետո թիթեռնածաղիկ բույսերի ար-  
մատների վրա նման պալարներ արդեն չեն առաջանում։

Հելլրիգելն այստեղից լեկավ այն ճիշտ լեզրակացու-  
թյան, վոր թիթեռնածաղիկ բույսերի արմատների վրա  
առաջացած պալարները հենց այն գործիքներն են, վո-  
րոնց միջոցով նման բույսերն ողից ազոտալին սննդա-

Նցութ են ստանում: Այսպիսով, ուրեմն, Հելլրիգելի հետագուությունները վերջնականապես պարզեցին դորձնական խոշոր նշանակություն ունեցող այն հանգամանքը, վորթիթեռնածաղիկ բույսերը հողը հարսացնում են ազդուվ և բարենպաստ պայմաններ են ստեղծում հետագա կուլտուրաների զարգացման համար: Մնում եր միայն պարզել թիթեռնածաղիկ բույսերի արմատների վրա առաջացող պալարների կոմկրետ գերը ողի ազդութիւնուներից ճիշտ գուրս լեկավ այն, վոր արել եր ոռու զիտնական Վորոնինը: Հաստատվեց, վոր այդ պալարները սովորական աչքով անտեսանելի մանր կենդանիների՝ բակտերիաների կուտեր են:

Այդ շրջանում բակտերիուզիան, վորպես բակտերիաների վերաբերյալ մի դիտություն, դեռ լեբիտասարդ եր և նոր եր քաղաքացիական իրավունք ձեռք բերում:

Բակտերիուզիալի զարգացման հետ միասին, 1888 թ. Բելլրինկին հաջողվեց թիթեռնածաղիկ բույսերի արմատների վրա առաջացող պալարների մեջ հայտաբերել լուրահատուկ բակտերիաներ, վորոնց նա անվանեց պալարիոր բակտերիաներ (Bacterium radicicola): Հետագա ուսումնասիրությունները ցույց տվին, վոր լերը Բելլրինկի հայտաբերած բակտերիաները զատվում են այդ պալարներից և գրվում հարմար միջավայրում, նրանք սկսում են կլանել ու կտպել ողի մեջ լեղած աղատ աղոտը և այն վերածել բույսի համար մատչելի ձեռի: Միաժամանակ հնարավոր լեղավ լուսաբանել այն հարցը, թե ինչ ճանապարհով ե տեղի ունենում պալարավոր բակտերիաների բարենպաստ ազդեցությունը բույսերի վրա: Պարզվեց, վոր կուլտուրական բույսը և այդ բակտերիաները, համագործակցության հիմունքներով, վորոշ հարաբերության մեջ են մտնում իրար հետ. բակտերիաները բույսից ստանում

Են պատրաստի նյութեր՝ շաքար և ոսլա, վորոնք արելի ողնությամբ մշակվում են կանաչ տերևներում՝ բուլսի լաբորատորիայում. դրա փոխարեն իրենց հյուրընկալ բարեկամին՝ բուլսին բակտերիաները տրամադրում են ազոտ։ Հետագա ուսումնասիրությունները պարզում են, վոր պալարաբակտերիաները լինում են տարբեր. յուրաքանչյուր թիթեռնածաղիկ բույս, մեծ քանակությամբ պալարներ առաջացնելու, ուրեմն և մեծ քանակությամբ ազոտ կուտակելու համար պահանջում ե իրեն հատուկ բակտերիաներ։

Գիտությունը քայլում ե առաջ։ Հողի մեջ հայտաբերվում են անթիվ ու անհամար նոր տեսակի բակտերիաներ։ Պարզվում ե, վոր բակտերիաների դերը հողի մեջ չի սահմանափակվում ողում լեզած ազոտը թիթեռնածաղիկ բույսերի արմատների վրա կուտակելով։ Փորձնական ձանապարհով պարզվում ե, վոր բակտերիաներով հարուստ հողերը տալիս են ավելի բարձր բերք։ Դրա հիման վրա զիտնականները յենթաղրում են, վոր հողի մեջ, բացի պալարավոր բակտերիաներից, կան նաև առ բակտերիաներ, վորոնք նույնպես ազոտ են կլանում ողից։ Յեկ իրոք, 19-րդ դարի 90-ական թվականներին Բերտելոն իր աշխատանքներով ապացուցեց, վոր գոյություն ունեն հողի մեջ ազատ կերպով ապրող բակտերիաներ։ Ռուս զիտնական Վինոգրադսկուն 1893 թ. հաջողվեց հողից զատել ազոտ կլանող ու կապող բակտերիաներ (*Clostridium Pasteurianum*)։ Մի քիչ հետո, 1901 թ. վերը հիշված Բելերինկը հողի մեջ հայտաբերում է լայն չափով տարածված բակտերիա ու անվանում նրան ազոտաբակտեր։ Այս վերջինը նույնպես ընդունակ է ողի ազոտը կլանել ու վերածել բուլսի համար միանգամայն մատչելի ձևի։ Զանազան որդանական նյութերի, կենդանիների մար-

մինների և այլ մնացորդների տարրալուծման ընթացքում  
բակտերիաների միջոցով հողի մեջ առաջանում և ամոնիակ,  
վորն ազոտ և պարունակում: Վինոգրադսկու հայտարե-  
րած բակտերիաների միջոցով գազալին այդ ամոնիակն ողի  
ազատ շրջանառության պայմաններում վեր և ածվում  
ազոտական թթվի աղի, վորը բոլորին հայտնի յե սելիտրա  
անունով: Գազալին ազոտի այդպիսի վերածումն ազոտա-  
կան աղերի, կոչվում և նիտրիֆիկացիա, իսկ այդ ճանա-  
պարհով առաջացած աղերը կոչվում են նիտրատներ: Ընոր-  
հիվ սուս գիտնականների հետազոտությունների (Կոստի-  
չեվ, Ոմելյանսկի, Վինոգրադսկի և այլն) նիտրիֆիկացիայի  
խնդիրը բազմակողմանի և հիմնական կերպով լուսաբան-  
ված և գիտության մեջ այդ հանդամանքը գործնական  
կլանքում մեծ չափով ոգնում ե մեզ հողի բերքատվու-  
թյան բարձրացման գործում: Հետազոտությունները ցուց  
են տալիս, վոր ինչքան լավ է մշակվում հողը, ինչքան  
ապահովված ե լինում նա անհրաժեշտ խոնավությամբ, ողով  
ու չերմությամբ, այնքան ուժեղ և տեղի ունենում ան-  
թիվ ու անհամար բակտերիաների գործունելությունը,  
վորի չնորհիվ հողի մեջ տեղի լին ունենում ազոտի կու-  
տակում, որգանական նլութերի տարրալուծում, ածխա-  
թթվի արտադրում և մի քանի այլ ոգտակար սլոցեսներ:  
Բայց միաժամանակ պետք է հիշել վոր այդ ոգտակար  
աշխատանքի հետ մեկտեղ, բակտերիաները հողի մեջ կա-  
տարում են և բացասական աշխատանք, վորի մասին պետք  
է իմանա մեր այսորվա լուրաքանչյուր կոլտնտեսական,  
գլուղատնաեսության ասպարեզում գործող լուրաքանչյուր  
աշխատող: Այդ բացասական աշխատանքն այն է, վոր հողի  
վատ մշակման դեպքում, իերը առաջանում է կեղե, հողն  
ամրանում է, ջուրը դառնում է անշարժ, ոդ չի մտնում  
հողի մեջ, ազատ կերպով հանդես են գալիո այնպիսի

բակտերիաներ, վորոնք կուլտուրական բույսերի համար անհրաժեշտ աղոտի մատչելի աղերը տարրալուծում են, իսկ թանգարժեք աղոտն ողն ե ցնդում և անողուտ կորչում:

Այսպիսով, մենք տեսնում ենք, թե ինչպես բաղմաթիվ գիտնականների լերկարատև աշխատանքի ու պարզարի, գիտական մտքի անընդհատ զարգացման ճանապարհով պարզվել ե, վոր կուլտուրական բույսերը սնվում են հանգային լուծելի ու դյուրաշարժ նյութերով, իսկ հողի որդանական նյութերը պարունակում են կապված դրությամբ նման սննդանյութեր: Այդ որդանական նյութերը բակտերիաների միջոցով առաջնաբար տարրալուծվում են ու նրանց մեջ լեղած սննդանյութերը տրամադրվում են բույսին:

Կուլտուրական բույսերի սննդառության ուսումնամիբության պատմական այդ ընթացքը, վորի մասին համառոտ կերպով մենք այստեղ խոսեցինք, ըստ ելության, բերքի բարձրացման համար մղվող պարզարի պատմություն ե: Ժամանակակից գիտության նվաճումների հետ միասին այդ պատմությունը լուսաբանում ե այն ճանապարհը, վորով մենք պետք ե ընթանանք, վորպեսզի բարձրացնենք սոցիալիստական դաշտերի բերքատվությունը և ապահովենք Յ-րդ հնգամյակում նախատեսված տնտեսական խնդիրների լիակատար լուծումը:

Դրա համար մենք պետք ե ծանոթանանք նաև մեր հողերին ու նրանց մեջ լեղած սննդանյութերին, դրանց մոտենանք կուլտուրական բույսերի պահանջների տեսակետից, արհեստական կերպով լրացնենք ու ավելացնենք բույսի համար մատչելի սննդանյութերի պաշարը և կուլտուրական բույսերի լավագույն զարգացման համար ապահովենք անհրաժեշտ պայմաններ:

## ՄԵՐ ՀՈՂԱՅԻՆ ՊԱՅՄԱՆՆԵՐՆ ՈՒ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

(ՍՅԵԴԱՅԵՐԵՔԻ Քանակը և յուրացման աստիճանը)

Վերը բերված պատմական համառոտ ակնարկից մենք տեսանք, վոր կուլտուրական բույսերն իրենց կանոնավոր զարգացման, ուրեմն և բարձր բերք տալու համար, պահանջում են ազոտ, ֆոսֆոր, կալիում, կալցի, մագնի, ծծումբ և ալյն։ Դրա հետ միասին մենք հիշատակեցինք, վոր հետագա հետազոտությունները ծավալում են բույսի համար անհրաժեշտ արդ տարրերի ցուցակը։ Հողի մեջ տարբեր քանակությամբ այս կամ այն տեսակի սննդանութ մուծելով՝ գիտնականները պարզել են, վոր, մի կողմից՝ տարբեր բույսեր տարբեր քանակությամբ են սպառում այս կամ այն սննդանութը, իսկ մյուս կողմից՝ միենույն բույսին մի տեսակ սննդանութ անհրաժեշտ է մեծ քանակությամբ, իսկ մյուս տեսակը՝ շատ չնշին։ Այս կապակցությամբ հետաքրքրական է պարզել, թե հողի մեջ ինչ քանակությամբ է դանվում այս կամ այն սննդանութը։ Իսկ արդ հանդամանքը կախված է հողի տեսակից, նրա հատկություններից և կուլտուրական աստիճանից, քանի վոր տարբեր շրջանների հողերը մեկը մյուսից խիստ տարբերվում են։

Ծնորհիվ Խորհրդավորն Հայաստանի բնական պարմանների բազմազանության և պատմական անցյալի, մենք ունենք հողի բազմաթիվ տեսակներ։ Արաքսի ավերից սկսած մինչև Արագածի ու Աղմաղանի գագաթները կարելի են հանդիպել հողերի այն բոլոր տեսակներին, վորոնք գտնվում են Խորհրդավորն Միության մեջ, Կասպից ծովից սկսած մինչև Հյուսիսական Սառուցյալ ովկիանոսի ափերը։ Խորհրդավորն Հայաստանի լեռնալին բոլոր տափառ-

տաններն ու նրանց մոտակա թեքությունները (Լենինականի, Լոռու, Ապարանի, Սխոտալի, Սևանի, Զանգեզուրի շրջաններում) ծածկված են սևահողերով, վորոնց ընդհանուր տարածությունը, մեր տվյալներով, կազմում է հանրապետության հողացին ֆոնդի մոտ  $24^0/0$ -ը: Ինչով են տարբերվում այդ հողերը մեր մյուս շրջանների հողերից: Յեթե ուշադրությամբ նայենք խճուղու լեզվերին, առուներին, լեզվաթուղու կողերին, փոսերի պատերին, այդ շրջաններում, առանց դժվարության, կտեսնենք հետևալը. մակերեսից մինչև վորոշ խորություն՝  $40—50$  ամ, հողը ունի սև գույն, խակ հետո, աստիճանաբար, խորության ուղղությամբ, փոխվում է դեղնագույն կամ սպիտակագույն հողի: Այս վերջինը, վորի շերտն ունենում է տարբեր հաստություն, մի քիչ ներքեւ փոխվում է բազալտ կամ տուֆ քարերի: Յեթե մենք մոտիկից դիտենք վերեկի սև հողի շերտը, կտեսնենք, վոր վարելաշերտի սահմաններում այն փոշիացած է, իսկ  $15—20$  սմ ներքեւ սկսվում է բավական լավ կնձիկավոր սարուկտուրա, վորը խորության ուղղությամբ շարունակվում է զրեթե մինչև այդ շերտի վերջը: Մակերեսի հողի փոշիացած դրությունը դժվարացնում է ողի ու ջրի մուտքը, իսկ հողի մեջ լեզած խոնավությունը չի կարողանում պաշտպանել գոլորշիացումից: Այդ պատճառով հողի վերին շերտում ստեղծվում են բույսի համար աննպաստ պայմաններ: Դրան հակառակ, ներքին ստրուկտուրանքն էնթաշերտն ունի միանգամայն դրական հատկություն: Մեր մի քանի շրջաններում, որինակ՝ Ղուկասյանի, Գորիսի սևահողերը նման լավ ստրուկտուրա ունեն ուղղակի մակերեսութից: Քիմիական անալիզը ցուց է տալիս, վոր սևահողի այդ վերին շերտը պարունակում է  $4—10^0/0$  որդանական նյութ կամ հողմուտ,  $0,2—0,4^0/0$  ազոտ, մինչև  $0,2^0/0$  փոսփոր,  $1,5—2,5^0/0$

կալիում և ալին: Բացի դրանից, այդ հողերը պարունակում են մեծ քանակությամբ կիր: Ըստ մեխանիկական կազմի՝ Խորհրդավին Հայաստանի սևահողերն ընդհանրապես բավական ծանր են և պարունակում են մեծ քանակությամբ կավալին մասնիկներ: Դա հնարավորություն ետալիս մեծ քանակությամբ խոնավություն ու սննդանյութեր կլանել և վերջինները պաշտպանել վողողումից: Հասկանալի լե, վոր մեր բոլոր շրջաններում սևահողերը միատեսակ չեն: որինակ՝ Լոռու գաշտերում, Ստեփանավանում նրանք ունեն հաստ շերտ, մեծ քանակությամբ հումուս, լավ ստրուկտուրա. Նոր-Բայազետում նրանց շերտը բարակ է, հումուսը՝ պակաս և ստրուկտուրան՝ վատ: Լենինականի տափաստանում միջին դրություն և տիրում: Սևահող շրջաններից վերև, Արագածի, Աղմաղանի, Միսխանալի և այլն լեռների բարձրագիր մասերը ծածկված են արգեն ուրիշ, լեռնամարգավին հողերով, վորոնք նույնպես մեծ տարածություններ են բռնում, ինչպես և սևահողերը: Սակայն վերջիններից նրանք բավականին տարբերվում են: Նախ և առաջ լեռնամարգավին հողերը պարունակում են ավելի շատ որգանական նյութեր՝  $12-17^0/_{\circ}$ : Այնունեան նրանք ունեն ավելի մանր ու նուրբ հատիկավոր ստրուկտուրա, իսկ նրանց շերտի հաստությունը սովորաբար ավելի քիչ է, քան սևահողերինը: Սևահողերի հետ համեմատած՝ լեռնամարգավին հողերը մեծ մասամբ թեթև մեխանիկական կազմ ունեն և քարքարոտ կոպիտ մասեր ավելի շատ են պարունակում: Փոստեղերում ու կավալին հողերում, վարտեղ մեծ քանակությամբ կիսաքարավայրած որգանական նյութեր և խոնավություն են կուտակվում, առաջ և գալիս ճահճոտ հող՝ թուլ թթու հատկությամբ: այդ հողում արգեն բռնում են թթու բույսեր և վատացնում արոտի վորակը: Նման թթու լեռնամարգավին հողերն իրենց ստորուկտուրայով

նմանվում են Խորհրդավիճ Միության հյուսիսալին շրջան-ների պաղպղ կոչված հողերին: Պաղպղ հողերը, վորոնք ԽՍՀՄ-ի հյուսիսալին մասերում հսկայական տարածություններ են բռնում, թթու հողեր են, բայց մեր լեռնամարգալին հողերին հակառակ, շատ քիչ քանակությամբ որդանական նյութեր են պարունակում, ստրուկտուրալից զուրկ են, սննդանլութերով աղքատ:

Արարատյան դաշտի սահմաններում, Հոկտեմբերյան, Վաղարշապատի, Ղամարլիի շրջաններում բավական տարածություն են բռնում վոռոգվող կուլտուրական հողերը, վորոնք մարդկալին կոլեկտիվի հազարավոր տարիների աշխատանքի արդյունք են: Այդ հողերը սևահողերից հիմնականում տարբերվում են նրանով, վոր ալսաեղ որդանական նյութերն ավելի պակաս են ( $2-4\%$ ), բայց ավելի շատ հանքալին սննդանյութեր են պարունակում, իսկ վարելահողերի սահմաններում միշտ պարունակում են վորոշ քանակությամբ կիր: Վոռոգելի կուլտուրական հողերի ստրուկտուրան սերտորեն կապված է խոտաբույսերի մշակման հետ: Վերջինների մշակումն արագ կերպով բարելավում ե այդ հողերի ստրուկտուրան և ավելացնում որդանական նյութերի ու ազոտի պաշարը: Բացի գրանից՝ Արարատյան դաշտի սահմաններում ստրոբերկրյա (գրունտի) ջրերը բավական մոտենում են հողի մակերևույթին և հաճախ նպաստում ազոտ հողերի առաջացմանը (Եվջիլարում): Կուլտուրական հողերի կողքին կարելի լի գտնել որդանական նյութերով աղքատ ( $1-2\%$ ),  $10-20$  մմ խորություն ունեցող կիսանապատալին, մեծ մասամբ քարքարոտ հողեր (ղուերը), վորոնք ներկայումս աստիճանաբար մշակվում են:

Վերջապես մեր նախալեռնալին ու մի քանի այլ շրջանների հողերը (Կոտայք, Աշտարակ, Միկոլայն, Աղիզբեկով,

Ղափան, Իջևան և այլն) իրենց կազմությամբ ու հատկությամբ մի կողմից մոտենում են լեռնային շրջանների նվազ քանակությամբ հումուս պարունակող սևահողերին, իսկ մյուս կողմից՝ Արարատյան դաշտի վոստվող հողերին:

Մեր հողերի մեջ յեղած առանձին մննդանյութերի քանակի մասին պարզ պատկերացում ունենալու համար անհրաժեշտ ե բերել հետեւյալ թվական տվյալները (տըրգում ե միայն վերին, վարելաշերտի համար):

### Խորհրդային Հայաստանի հողերի ֆիմիական կազմը ՏՈԼՈՒԹԵՐՆԴ

Կազմը	Հողի անունը					Մանություն
	Լէնդ ակտ	Անդ ակտ	Գոյն ակտ	Վայական ակտ	Վայական ակտ	
Աղուտ	0,21	0,30	0,33	0,16	Թվական	
Յանչոր	0,04	0,10	0,19	0,61	ավագաները	
Կալիում	1,08	2,69	1,60	1,68	վեցգամճ են	
Կալցի (կեր)	3,31	7,08	4,34	3,28	հեղինակի	
Մագնի	2,53	3,89	2,47	2,65	աշխատություններ	
Ծծումբ	0,01	0,01	0,51	—	բից:	
Ցերկաթ	10,95	5,92	6,17	7,89		
Սիլիցի	57,50	50,37	53,95	59,03		
Նատրիում	1,40	3,30	2,44	4,41		
Ալյումին	14,82	13,98	18,92	14,09		
Հումուս	5,52	5,67	5,89	2,69		

Բերված թվական տվյալներից պարզ յերկում ե, վոր հողի հիմնական մասը կազմում են այն տարրերը, վորոնց կարիքը բույսը չի գտում: Բույսի համար կինսական անհրաժեշտություն ունեցող տարրերը՝ ազուր, ֆոսֆորը, կալին, վորոնք պահանջվում են մեծ քանակությամբ, հողի

մեջ գտնվում են ամենից քիչ։ Վորապեսդի կարելի լինի գաղափար ունենալ հողի մեջ յեղած սննդանյութերի ընդհանուր պաշարի մասին, անհրաժեշտ և հաշվի առնել այդ նյութերի քանակը հողաշերտի ամբողջ խորության վրա։ Մեր կատարած հաշիվները ցույց են տալիս, վոր մի հեկտար տարածության վրա ու հողի ամբողջ շերտը միջին հաշվով պարունակում ե՝

	Որգանական նյութ	Ազուր	Ֆոսֆոր	Կալիում
Անինականում	336000 կգ.	14000 կգ.	3200 կգ.	130000 կգ.
Արթիկում	411000 »	24000 »	16200 »	233000 »
Քյարիմ քյանդում	410000 »	21000 »	25500 »	227000 »
Ստեփանավանում	426000 »	24000 »	14700 »	92000 »

Յեթե նկատի ունենանք, վոր, որինակ՝ ցորենի 20 ցենտներ միջին բերքը մի հեկտարից վերցնում է մոտավորապես 45 կգ. ազուր, 22 կգ. ֆոսֆոր և 27 կգ. կալիում, դժվար չե հաշվել վոր Խորհրդային Հայաստանի սեփահողերի մեջ յեղած սննդանյութերի վերը բերված քանակը կարող է տալ.

Ազուր . . . .	311—544 բերք
Ֆոսֆորը . . . .	145—1160 »
Կալիումը . . . .	3407—8630 »

Մյուս սննդանյութերը, ինչպիսիք են՝ կալցին, մաղնին, յերկաթը, վորոնց պաշարը հողի մեջ հսկայական է, իսկ պահանջը բույսի կողմից չնչին, կարող են լավ բերք ապահովել հաղարակոր տարիներ։ Պարզ է, վոր նման մոտավոր հաշիվներ կատարելու հետ միասին չպիտի մոռանալ, վոր ազուրի, ֆոսֆորի և այլ սննդանյութերի քանակը հողի մեջ անընդհատ փոփոխվում է։

Ամեն մեկը այս թվերը տեսնելով՝ կարող է հարց տալ՝ յեթե հողի մեջ գտնվում են սննդանյութերի այդպիսի մեծ պաշարներ, ապա ինչո՞ւ մենք բարձր բերք չենք

ստանում առանց հիմնական կերպով պարարտացնելու մեր հողերը: Կարող ենք արդյոք բերված թվերն ընդունել վորպես հողի բարձր բերքատվության ցուցանիշ: Ինարկե վոչ գյուղատնտեսական պրակտիկան ցույց է տալիս, վորանանց արհեստական կերպով հողը պարարտացնելու և մեծաշխատանք թափելու, հնարավոր չե բարձր բերք ստանալ անկախ հողի մեջ յեղած սննդանյութերի թեկուզ և մեծ քանակից:

Վերն ե այդ գաղտնիքը: Գաղտնիքն այն ե, վոր հողի մեջ յեղած սննդանյութերի հսկայական պաշարը գտնվում է համարյա անշարժ վիճակում: Պատմական ակնարկից ու Լիբիխի դառն փորձից մենք տեսանք, վոր կուլտուրական բույսերը սնվում են միայն այն նյութերով, վորոնք հեշտությամբ լուծվում են ջրի մեջ: Իսկ յերբ այս կամ այն սննդանյութը, որինակ՝ ֆոսֆորը, դժվար է լուծվում, բույսը չկարողանալով անհրաժեշտ չափով ողտագործել այդ սննդանյութի պաշարը, դանդաղ է զարգանում ու քիչ բերք տալիս: Այստեղից պարզ ե, վոր հողի բերքատվության մասին ճիշտ գաղափար ունենալու համար անհրաժեշտ է իմանալ վոչ միայն տարբեր սննդանյութերի քանակը, այլև նրանց լուծունակության աստիճանը կամ, ինչպես ասում են, ջարժուհակությունը:

Այդ ինդիքը պարզելու համար անհրաժեշտ է բերել մի քանի թվական տվյալներ: Այսպես, որինակ՝ Լենինականի նախկին փորձադաշտի սևահողերի մեջ յեղած ազոտից նրա մոտ  $\frac{1}{2}^0/_{\circ}$  ն է լուծվում ջրի մեջ վոր մի հեկտար տարածության վրա տալիս և մինչև 70 կգ. ազոտ:

Նույնը պիտի ասել և ֆոսֆորի մասին: Կալիումը, համեմատած ֆոսֆորի ու ազոտի հետ, հեշտությամբ է լուծվում: Լուծելի կալիումի քանակը Լենինականի ու Քյարիմքյանդի հողերում, միայն վարելաշերտի սահման-

ստանում առանց հիմնական կերպով պարարտացնելու մեր հողերը: Կարող ենք արդյոք բերված թվերն ընդունել վորպես հողի բարձր բերքատվության ցուցանիշ: Ինարկե փնչ. գյուղատնտեսական պրակտիկան ցույց ե տալիս, վոր առանց արհեստական կերպով հողը պարարտացնելու և մեծ աշխատանք թափելու, հնարավոր չե բարձր բերք ստանալ, անկախ հողի մեջ յեղած սննդանյութերի թեկուղ և մեծ քանակից:

Վերն ե այդ գաղտնիքը: Գաղտնիքն այն ե, վոր հողի մեջ յեղած սննդանյութերի հակայական պաշարը գանվում ե համարյա անշարժ վիճակում: Պատմական ակնարկից ու կրթիսի դառն փորձից մենք տեսանք, վոր կուլտուրական բույսերը սննվում են միայն այն նյութերով, վորոնք հեշտությամբ լուծվում են ջրի մեջ: Խակ յերբ այս կամ այն սննդանյութը, որինակ՝ ֆոսֆորը, դժվար է լուծվում, բույսը չկարողանալով անհրաժեշտ չափով ողտագործել այդ սննդանյութի պաշարը, դանդաղ ե զարդանում ու քիչ բերք տալիս: Այստեղից պարզ ե, վոր հողի բերքատվության մասին ճիշտ գաղափար ունենալու համար անհրաժեշտ ե իմանալ վոչ միայն տարրեր մննդանյութերի քանակը, այլև նրանց լուծունակության աստիճանը կամ, ինչպես ասում են, շարժունակությունը:

Այդ խնդիրը պարզելու համար անհրաժեշտ ե բերել մի քանի թվական տվյալներ: Այսպես, որինակ՝ լինինականի նախկին փորձագաշտի սկանողերի մեջ յեղած ազոտից նրա մոտ  $1/2^0/0$ -ն ե լուծվում ջրի մեջ, վոր մի հեկտար տարածության վրա տալիս ե մինչև 70 կգ. ազոտ:

Նույնը պիտի ասել ե ֆոսֆորի քասին: Կալիումը, համեմատած ֆոսֆորի ու ազոտի հետ, հեշտությամբ է լուծվում: Լուծելի կալիումի քանակը լինինականի ու Քյարիմքյանդի հողերում, միայն վարելաշերտի սահման-

ներում, հասնում է 300—400 կգ. մի հեկտարի վրա: Հողի որդանական նյութը, հումուսը, վորը սննդանյութերի աղբյուր է հանդիսանում, ջրի հետ մշակելուց հետո տալիս ե մոտ  $\frac{1}{2}/\frac{0}{0}$  լուծելի նյութ: Այս բոլորից յերեսում է, վոր հողի մեջ յեղած սննդանյութերի ճնշող քանակը գրանը կում է դժվար լուծելի վիճակում: Բնական պայմաններում նա աստիճանաբար ու զանդաղ է լուծվում և այդ պատճառով լրիվ կերպով չի ոգտագործվում կուլտուրական բույսերի հողմից: Պարզ է, վոր, յեթե մենք չմիշտ մըտենք այդ բնական պայմաններին, չփոխենք հողի այդ հատկությունը, չբարձրացնենք սննդանյութերի շարժունակությանը, լուծունակության աստիճանը, մենք չենք կարող ոգտագործել մեր հողերի մեջ յեղած այդ հակայական պաշարները և բարձրացնել սոցիալիստական դաշտերի բերքատվությունը:

Կուլտուրական բույսերի սննդառության գործում մեծ դեր է խաղում հողի մեջ յեղած խոնավությունը, ջուրը: Այս ջուրը, վոր այս կամ այն քանակությամբ գտնվում է հողի մեջ, վոչ մի տեղ, վոչ մի դեպքում մաքուր չեւ: այդ ջուրը միշտ պարունակում է լուծված վիճակում վորոշ քանակությամբ սննդանյութեր, հանքային կամ որդանական նյութերի ձևով: Բացի դրանից՝ հողի մեջ յեղած այդ ջուրը միշտ լինում է պղտոր, վորովհետև նրա հետ խառնը կած հողի մասնիկներն այնքան մանր են, վոր յերկար ժամանակ կարող են կախված մալ ջրի մեջ:

Հողի այդպիսի լուծույթը, այսինքն հողի մեջ յեղած ջուրը, լուծված ու խառնված նյութերի հետ, տարբեր պայմաններում ունի տարբեր կազմ: Յերբ նրա մեջ լուծված նյութերի քանակը մեծ է, նա լինում է խիտ, ամառվա շոգերին, յերբ ջուրն ուժեղ կերպով գոլորշիանում է, նրա մեջ յեղած հանքային նյութերը՝ աղերը խտանում

են, և մի շարք դեպքերում առաջանում են սպիտակ աղութ հողեր, որինակ՝ մեր գաշտավարական շրջաններում (Ղամարլու, Եղջիլար և այլն): Անձրեների ժամանակ կամ վոռոգման պայմաններում հողի լուծույթի խտությունը պակասում է և հողի լուծույթը ընդունակ է դառնում նոր նլութեր լուծելու: Այդ լուծույթն այն միջավայրն է, ուր թափանցում են բույսի արմատները և հափառում բույսի համար անհրաժեշտ ու մատչելի սննդանյութեր:

Այդ լուծույթի միջոցով են միան սննդանյութերը փոխադրում հողի ներքին շերտերից դեպի վերև ու մոտենում բույսի արմատավին ցանցին. լուծույթն այդ տեսակետից սննդանյութեր փոխադրողի դեր և կատարում:

Հողային լուծույթի կարեռությունը լերեռում է նաև նրանից, վոր չեթե կուլտուրական բույսն ամրացնենք արհեստական կերպով պատրաստված այդպիսի լուծույթի մեջ, նա կարող է կանոնավոր կերպով աճել, զարգանալ ծաղկել և բերք տալ: Սական ընթերցողը կարող է հարց տալ. հողի լուծույթը, վորը բավական քանակությամբ անհրաժեշտ սննդանյութեր և պարունակում, կարող է արդյոք բոլոր դեպքերում ել ապահովել կուլտուրական բույսերի նորմալ զարգացումը: Այդ հարցին բացասական պատասխան պիտի տալ Սննդանյութերի առկայությունը լուծույթի մեջ դեռ բավական չել: Բայց իր վորակի հողային լուծույթը կարող է լինել թթու կամ հիմքային, կամ վոչ մեկը և վոչ մյուսը, այլ ուղղակի չեղոքը: Որինակ՝ աղութ հողերը, ինչպիսիք են Հոկաեմբերլանի ու Դավալուի միջեւ ընկած տարածությունների առանձին կտորները, ունեն հիմքային, շոռ հատկություն: Իսկ լեռնային շրջանների, որինակ՝ Ղարախաչի ձահճացող արոտների հողերը, ինչպես նաև հյուսիսային շրջանների պաղպղ հողերն ունեն թթու հատկություն:

Կուլտուրական բույսերի և նրանց անտեսանելի անթիվ ու անհամար բարեկամների՝ բակտերիաների էյանքի ու զարգացման համար միենույնը չե, թէ ինչպիսի միջավայրում են նրանք ապրում: Գիտության մեջ և գործնական կյանքում ապացուցված ե, վոր յերբ հողային լուծույթը շատ թթու յե կամ հիմքալին, բույսերն ու բակտերիաներն ապրել չեն կարող: Նման պայմաններում բույսը վոչ միայն լավ բերք չի տալիս, այլև աստիճանաբար նվազում և նույնիսկ վոչնչանում ե, յեթե միջավայրը ծալրահեղ անբարենպաստ ե, անկախ նրանից, թե ինչպիսի քանակությամբ հողի մեջ մատչելի սննդանյաւեր կան:

Կուլտուրական բույսերը և հողի մեջ լեղած բակտերիաներն իրենց կանոնավոր զարգացման ու ակտիվ գործունելության համար պահանջում են չեղոք կամ նրան մոտ միջավայր՝ վորոշ տառանումներով այս կամ այն կողմը:

Այս բոլորից հետո անհրաժեշտ ե ծանոթանալ կուլտուրական բույսերի զարգացմանը, բարձր բերքի համար պահանջվող սննդանյութերի առանձին տեսակներին, պարզել նրանց գերը բերքատվության գործում և նշել հնարավոր ուղիներ՝ այդ նյութերի ոգտակար պաշարը հողի մեջ ավելացնելու նպատակով:

## ԱԶՈՏԻ, ՖՈՍՖՈՐԻ ՈՒ ԿԱԼԿՈՒՄԻ ԽՆԴԻՐԸ

Մենք արդեն գիտենք, վոր բույսի համար անհրաժեշտ սննդանյութերից ազոտն ամենակարևորներից մեկն ե, վորը բույսի կողմից պահանջվում ե հսկայական քանակությամբ. բավական ե հիշեր, վոր յուրաքանչյուր 10 ցենտներ բերքի հետ հողից դուրս և տարվում 20 կգ. վոչ

պակաս ազոտ: Նման պահանջը հետևանք է այն բանի, վոր ազոտը մեծ չափով մտնում է սպիտակուցի, որինակ՝ ցորենի հատիկի, կազմի մեջ: Յերբ հողի մեջ ազոտը պակասում է, բույսի գարգացումը դանդաղ է ընթանում, և բերքը պակասում, ընկնում է: Սակայն, յեթե ժամանակին անհրաժեշտ միջոցներ ձեռք առնենք հողի մեջ ազոտ մռւծելու ուղղությամբ, բույսի աննորմալ դրությունն արագ կերպով կվերականգնվի, և բերքը կրաքարանա: Այստեղ գործնական հետաքրքիր հարց կարող է ծագել, թե բույսի գարգացման ընթացքում, հնարավնը և արդյոք վորոշել ազոտի խիստ պակասը դաշտում: Այս, կարելի յէ: Ամեն մի կոլխոզնիկ ուշադրությամբ դիտելով իր ցանքը, կարող է նկատել այդ—յեթե թարմ ու կանաչ տերևներն սկսում են դեղներ դանդաղ գարգանալ կամ ուղղակի ժամանակից շուտ թափվել, այդ նշանակում է, վոր հողի մեջ ազոտի պակաս և զգացվում:

Ազոտական պարարտանյութերի միակողմանի մեծ քանակը նպաստում է խոշոր և մուգ-կանաչ տերևների առաջցման: Բացի դրանից՝ վործը ցույց է տալիս, վոր յերբ բույսերը միայն շատ ազոտ են ստանում, ուշ են համանում: Ազոտի չափազանց շատ քանակը տալիս է առատ տերևներ, բայց քիչ հատիկ: Այդ պատճառով անհրաժեշտ է ազոտը գործածել ֆոսֆորական պարարտանյութերի հետ: Գործնականում ազոտի այդ հատկությունը կարելի լեռնատարծութել, այն հարմարացնելով տարբեր կուլտուրաների պահանջներին: Որինակ՝ յեթե մենք մշակում ենք կաղամբ, յերբ մեղ հետաքրքրում են նրա տերևների մասսան, այդ գեպը ազոտական պարարտանյութը կարելի լեռնատարծութել: Բայց յերբ մեղ հետաքրքրում է ցորենի բերքը, հատիկը, անհրաժեշտ է ազոտի հետ միասին տալ նաև մեծ քանակությամբ ֆոսֆոր:

Պատմական ակնարկից մենք տեսանք, վոր աղոտի սկզբնական աղբյուրը ողն ե, վորտեղից զանազան բակտերիաների միջոցով այդ ազուրը մեծ քանակությամբ կապվաւմ ե և արամազրվում բռւլին։ Բայց մեծ քանակությամբ ազուր հնարավոր կլինի ստանալ այն գեպում միայն, յերբ մենք լավ մշակման ճանապարհով կկարողանանք հողն ապահովել ողով, անհրաժեշտ քանակի խոնավությամբ, տաքությամբ և վորոշ քանակի ֆոսֆորական նյութերով, այլապես բակտերիաները չեն կարող կանոնավոր աշխատել:

Թիթեռնածաղիկ բույսերի վրա լեղած բակտերիաները, լավ մշակման դեպում, մի հեկտարի վրա կարող են կուտակել մի քանի հարյուր կգ. ազուր։ Մեր կոլլուգները, վորոնք մտադիր են ցորենից հետո առվուրս ցանել կարող են հետաքրքրվել, թե բավական ե արգոք միայն առվուրսի ցանքը, վորպեսզի ողից ազուր կանող պալարավոր բակտերիաներ առաջ գան և աշխատեն։ Փորձը ցույց ե տալիս, վոր ցորենից հետո մշակվող առվույտի արմատների վրա այդ բակտերիաների ակտիվ աշխատանքն առաջանում ե վոչ բոլոր գեպքերում։ ավելի լավ ե նման հողը վարակել հին առվույտի գաշտից վերցրած միքիչ հողով։ Այդ գործը հեշտացնելու համար լաբորատորիաներում պատրաստում են նիտրազին կոչված հասուկ պրեպարատը, վորով և վարակում են դաշտը։ Փորձը ցույց ե տալիս, վոր առվույտի նոր ցանքը հին առվույտի հողով կամ նիտրազինով վարակելու գեպքում բերքն զգալի չափով ավելանում է։

Հողի մեջ գտնվող բոլոր բակտերիաները զանազան ճանապարհներով ողից կանած ազուրը վեր են ածում սպիտակուցի՝ իրենց մարմնի, վորն այդ բակտերիաների կենդանի յեղած ժամանակ ևս անմատչելի յե բույսի հա-

մար, բայց նըանց մեռնելուց հետո սպիտակուցները տար-  
բալուծվում են, և ազոտը արամադրվում է բույսին:

Հողի հումուսը հատուկ բակտերիաների միջոցով առ-  
տիճանաբար քայլայվում և վեր և ածվում մի շարք նոր  
նյութերի, վորոնց մեջ գտնվում ե նաև ազոտ՝ գազային  
(ամիակի) վիճակում: Իսկ այդ վերջնու հողի մեջ վեր և  
ածվում ազոտի աղերի կամ նիտրատների: Վերջին վիճա-  
կում յեղած աղոտը, վորը ջրի մեջ հեշտությամբ լուծվում  
է, կուլտուրական բույսերն ամենից լավ են ոգտագործում:

Փորձը ցույց է տալիս, վոր գործնականում միանգամայն  
հսարավոր և մեծ քանակությամբ նման նիտրատներ կու-  
տակել հողի մեջ: Սակայն ինչից է կախված հողագործու-  
թյան համար անհրաժեշտ և ծայր աստիճան ոգտակար այդ  
նիտրատների առաջացման հաջողությունը: Նիտրատներ  
առաջացնող բակտերիաներն ամենից առաջ պահանջում  
են բարենպաստ ջերմաստիճան՝ մինչև 37, ողի աղատ  
մուտք հողի մեջ, բավական խոնավություն և չեղոք միջա-  
վայր: Ահա թե ինչու հողի հաճախակի փխրացումն ու  
չափավոր խոնավությունը մեծ չափով ավելացնում են  
նիտրատի քանակը և այդպիսով, նպաստում բերքի բարձ-  
րացմանը: Նիտրատներն ամենից ավելի մեծ քանակու-  
թյամբ սովորաբար կուտակվում են հումուսով հարուստ հո-  
ղերում, վերջիններիս լավ մշակման պայմաններում և տարվա  
տաք ժամանակ: Նման դեպքերում այս ճանապարհով հսա-  
րավոր է մի հեկտարի վրա կուտակել մի քանի հարյուր կգ  
աղոտ:

Մշակման միջոցով և բակտերիաների ոգնությամբ  
հողի մեջ կուտակվող աղոտը, իհարկե, զեռ չի կարող  
լիովին ապահովել սոցիալիստական դաշտերի բարձր  
բերքատվությունը: Այդ նպատակի համար մենք ունենք  
ավելի հզոր միջոց. զա մեր քիմիական արդյունաբերու-

թյունն ե, փորը հնարավորություն ե տալիս մեծ քանակությամբ ազոտ պարունակող արհեստական պարարտանյութ մուծել հողի մեջ: Ազոտ պարունակող ամենատարածված պարարտանյութերն են՝ սելիտրան, ամոնիակը և մասամբ ցիանամիդը\*):

Ազոտի չափի խիստ կարևոր մյուս մննդանյութը, վորն անհրաժեշտ ե բերքատվության համար, նույնպես մեծ քանակությամբ, ֆոսֆորական թթուն ե: Ֆոսֆորը մտնում ե հատիկի սպիտակուցի կազմի մեջ. նա անհրաժեշտ ե նաև բույսի տերևների կանաչ մասսայի (քլորոֆիլի) առաջացման համար, առանց վորի բույսը հնարավորություն չունի ոգտագործելու արելի եներգիան: Ցերք հողի մեջ ֆոսֆորը պակաս ելինում, հացաբույսերն ունենում են թույլ արմատային ցանց, զգալի կերպով դանդաղ են արմատավերվում, պակաս են առաջացնում այն ճյուղերը, վորոնք հասկ են տալիս: Բացի դրանից, ֆոսֆորի պակասության գեպքում տերևների նորմալ գույնը փոփոխվում, դառնում ե կարմրագույն, մոխրականաչագույն և այլն:

Վերևում տեսանք, վոր ազոտի ավելորդ քանակը կուլտուրական բույսերի հասունացման ժամկետը յերկարացնում ե, իսկ ֆոսֆորի ավելորդ քանակը, ընդհակառակը, կարձացնում ե այդ ժամկետը: Փորձերը ցույց են տալիս, վոր հացաբույսերը, վորոնք համեմատաբար շատ ֆոսֆորական պարարտանյութ են ստանում, մի քանի որ շուտ են հասնում և ավելի հատիկ տալիս. ֆոսֆորի պակասը հողի մեջ ցածրացնում ե նաև բերքի վորակը:

Մինչդեռ ազոտի հիմնական աղբյուրն ողն ե, ֆոսֆորական թթուն հողի մեջ առաջանում ե հանքերի տար-

\*) Տեղի սղության պատճառով մենք չենք խոսում առանձին պարարտանյութերի մասին, մանավանդ վոր նրանց վերաբերվող մի շարք բրոցյուրներ կան:

բալուծման հետևանքով ու տալիս տարբեր աղեր: Հողի մեջ  
փոսֆորն ամենից հաճախ գտնվում է փոսֆորական թթվի  
կալցիումի աղի ձևով: Բայց պատահում է նաև, վոր փոսֆորը  
կապված է լինում այլ տարրերի հետ: Ֆոսֆորական թթվի  
այդ աղերը կոչվում են ֆոսֆատներ: Ազոտին հակառակ,  
փոսֆատի աղերն ուժեղ կերպով կանում, պահվում են  
հողի մեջ և այդ պատճառով ջրի հետ գրեթե չեն տարբերվում  
հողից: Բացի հանքային աղերից՝ փոսֆորական թթուն  
կամ փոսֆորը հողի մեջ դտնվում է նաև որգանական  
նյութերի ձևով, հումուսի մեջ, և այն ել զգալի քանակու-  
թյամբ: Յերբ հողի որգանական նյութերը քայլայվում են,  
փոսֆորական թթուն աղատվում և վեր ե ածվում հանքային  
նյութերի: Պարզվում է, վոր փոսֆորական աղերը, վորոնք  
դժվար են լուծվում ջրի մեջ, մեծ մասով հեշտությամբ  
լուծվում են թթու միջավայրում: Իսկ մենք գիտենք, վոր  
հանքային սննդանյութերը, ուրեմն և փոսֆորը, բույսի  
սննդառության համար պիտանի յեն այն ժամանակ, յերբ  
նրանք լուծվում են հողի լուծույթի մեջ, հողի մեջ յեղած  
ջրում: Այստեղից հարց ե ծագում, թե հսարավնոր չե արդյոք  
դժվարալույթ փոսֆորական նյութերն ոգտագործել նաև այն  
հողերում, վորտեղ թթու միջավայրը բացակայում է, որի-  
նակ մեր սևահողերում կամ բամբակացան վրձանների հողե-  
րում: Սոցիալիստական հողագործության վորձը ցույց է տա-  
լիս, վոր կուլտուրական բույսերը հսարավորություն ունեն  
վորոշչափով ոգտագործելուն աև դժվարալույթ փոսֆորը:

Հողի մեջ յեղած փոսֆորական թթուն իր դան-  
դաղ շարժունակությամբ դեռ չի կարող բարձր բերք  
ապահովել: այդ պատճառով մենք, արհեստական կերպով,  
փոսֆորական պարարտանյութեր մուծելու միջոցով, հողը  
հարստացնում ենք: Ֆոսֆորական պարարտանյութերը պատ-  
րաստվում են գործարանային յեղանակով, գլխավորապես

բնական հանգերից՝ ֆոսֆորիտից և ապատիտից, վորոնք մինչև 30-40°/₀ ֆոսֆորական թթու յեն պարունակում: Բացի դրանից՝ այդ նպատակի համար կարելի յե սգտագործել վոսկորները, վորոնց զբեթե կեսը բաղկացած ե ֆոսֆորական աղերից, և արդյունաբերության՝ ֆոսֆոր պարունակող մնացորդները:

Ֆոսֆորական պարարտանյութերի մի մասը հեշտությամբ ե լուծվում ջրի մեջ և միանգամայն պիտանի յե կուլտուրական բույսերի համար (որինակ՝ սուպերֆոսֆատը). մյուս մասը քիչ ե լուծվում (որինակ՝ յերկալցիում ֆոսֆատը, պլրեցիպիտատը): Վերջապես, յերրորդ մասը բոլորովին չի լուծվում ջրի մեջ (որինակ՝ ֆոսֆորիտը): Սակայն այս վերջին կարգի ֆոսֆորական պարարտանյութերը պողպող և թթու հողերում զգալի չափով ոգտագործվում են կուլտուրական բույսերի կողմից:

Հողի յերրորդ կարևորագույն տարրը, վորն իրեն սնունդ անհրաժեշտ ե բույսին, կալիումն ե: Զնայած, վոր կալիումի քանակը հողի մեջ աղոտի ու ֆոսֆորի համեմատությամբ հսկայական ե, բայց և այնպես սոցիալիստական հողագործությունը բավական մտահոգված ե հողը կալիումով ապահովելու խնդրով: Այդ խնդրի լուծումն առանձնապես կարևոր ե դառնում այն շրջաններում, վորտեղ տեխնիկական բույսեր են մշակվում:

Ի՞նչպես կարելի յե իմանալ՝ հողը կալիումի կարիք ե զգում, թե վոչ: Յեթե բույսի տերեներն սկսում են մեռնել, չորանալ դադաթից ու ծայրամասերից և այդ պրոցեսն անցնում ե դեպի տերեկի կենարոնական մասը, նշանակում ե, վոր հողը կալիումի խիստ կարիք ե զգում: Այստեղ տեղին ե հիշել վոր ազոտի պակասության դեպքում բույսի տերեները վոչնշանում են և թափվում ամբողջությամբ: Կալիումի պակասության դեպքում բույ-

սը լինում ե նվազ, համեմատաբար շուտ ե հիվանդանում  
և յենթակա դառնում զանազան բացասական պայման-  
ների ազգեցության. որինակ՝ Անգլիայում նկատված ե,  
վոր թեթև հողերի վրա, կալիումի պակասության հետե-  
գանքով, պաղատու ծառերի տերեները կլորվում են և  
թափվում, ծխախոտի տերեների վրա առաջանում ե խլո-  
րող հիվանդություն և այլն. Արտաքին տեսքով կալիումի  
պակասության գեաքում տերեների կանաչ գույնը մուգ  
ե գառնում, գունատվում ե: Վերջապես, կալիումի պա-  
կասը հողի մեջ ազդում ե բերքի մեջ յեղած շաքարի և  
ուլայի քանակի վրա, վորապիսի հանգամանքն ուղղակի  
մնաս ե հասցնում շաքարի ճակնդեղի, կարառֆիլի և ու-  
րիշ այլ տեխնիկական բույսերի բերքի վորակին, այլև  
չենք խոսում այն մասին, վոր կալիումի պակասը գցում  
ե բերքի ընդհանուր քանակը:

Կալիումը, ֆոսֆորական նյութերի նման, հողի մեջ  
առաջ ե գալիս հանքերի հողմանարման հետեանքով: Նե-  
ֆելինը, թերթաքարերն ու դաշտային շպատներն այն  
հիմնական տեսակներն են, վորոնք տալիս են կալիումի  
լուծելի աղեր: Կալիումի աղերի ամենախոշոր հանքերը,  
վորոնք ամբողջ աշխարհին մատակարարում են կալիումի  
պարարտանյութեր, գտնվում են Չերմանիայում: Միայն  
Խորհրդային Միությունն ե, վոր առաջին հնգամյակի  
ընթացքում ստեղծել ե կալիումի խոշոր բազա և կալի-  
ումի պարարտանյութի մեր արտադրությունը լինի  
ապահովել սեփական հումույթով. զբանք Սոլիկամսկի  
խոշոր հանքերն են, վորոնք հայտաբերվել են Խորհրդա-  
յին իշխանության որոք (1925 թ.):

Մինչդեռ հյուսիսային շրջանների հողերում կալիումի  
գործածելուց բերքն զգալի չափով բարձրանում ե, հա-  
րավում, բամբակացան շրջաններում բերքի նման բարձ-

բացում չի նկատվում։ Դա բացառքվում է մասամբ նրանով, վոր մեր հողերը բավական հարուստ են կալիումի աղերով։ Բայց ազոտական և ֆոսֆորական պարաբանայութերի քանակը հողի մեջ աստիճանաբար ավելանալու հետ միասին, արդեն կալիումի պահանջ է առաջանում։ Բարձր բերք ստանալու համար մեծ քանակությամբ ազոտ ու ֆոսֆոր մուծելու հետ միասին պետք է մուծել նաև կալիում, մանավանդ տեխնիկական բույսերի մշակման գեպքում, վորոնք այդ նյութի ավելի մեծ կարիք են զգում։ Շատ կալիում պահանջող բույսերի շարքը պետք է դասել կարտոֆիլը, ծիախոտը, շաքարի ձակընդեղը, խոտաբույսերը, բանջարեղենները և այլն։

Կալիումի փոխարեն ամենայն հաջողությամբ կարելի յե գործադրել սովորական վառարանի փոշին, վորը, բայց մեծ քանակությամբ կալիումից, պարունակում է նաև ֆոսֆոր ու կալցիո։

## ՀՈՂԻ ՊԱՐԱՐՏԱՑՄԱՆ ՄԻ ՔԱՆԻ ԽՆԴԻՐՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Կուլտուրական բույսերի համար չափազանց կարեոր յերեք հիմնական սննդանյութերին՝ ազոտին, ֆոսֆորին ու կալիումին ծանոթանալուց հետո, անհրաժեշտ է համառոտ կերպով պարզաբանել նրանց գործածության հետ կապված մի քանի կոնկրետ խնդիրներ։

Մեր պլանային տնտեսության պայմաններում, վորտեղ աշխատանքի արտադրողականությունը մեր ամրող գործունեյության հիմնական չափանիշն է հանդիսանում, ամենից առաջ հետաքրքրական ե պարզել, թե մեր գաշտերը մուծվող պարաբանայութերի վնար մասն է անմիջապես ողտագործվում բույսի կողմից, վնար մասն է մաս-

նակցում բարձր բերք ստանալու գործում: Որինակ՝ յեթե  
վերցնենք 1000 տոնն ծծմբաթթվային ամռնիակը, նրա  
մեջ միայն 200 տոնն ոգտակար աղոս կա, իսկ մնացած  
800 տոննը անպետք, անոգուտ բալաստ եւ Պարզ ե, վոր  
այդ անոգուտ բալաստը ծանրաբեռնում ե մեր տրանս-  
պորտը ու փոխադրության համար անագին ծախսեր պա-  
հանջում: Դժվար չի պատկերացնել թե ինչ արժե կենտ-  
րոնից մինչև Ստալինաբարդ կամ Յերևան 200 տոնն  
ոգտակար նյութի փոխարեն հինգ անգամ ավելի բեռ փո-  
խադրելը: Այս հանգամանքն անհրաժեշտ ե գարձնում  
արտադրել այնպիսի պարարտանյութեր, վորոնք պարու-  
նակում են բույսի համար պիտանի մեծ քանակությամբ  
նյութեր և աղատ են ավելորդ բալաստից: Այդ պատճա-  
ռով այժմ արդեն պատրաստվում են այնպիսի պարար-  
տանյութեր, վորոնք պարունակում են մի քանի մննդա-  
նյութ: Մասնավորապես մեր արդյունաբերությունը տա-  
լիս ե աղոտի ու ֆոսֆորի մի ընդհանուր պարարտա-  
նյութ, վորը կոչվում է դիամոնը: Այս պարարտանյութի  
մի տոննը, ըստ իր մննդանյութերի ոգտակար քանակի ու  
արժեքի, հավասար է  $3\frac{1}{2}$  տոնն սուպերֆոսֆատի և մեկ  
տոնն ծծմբաթթվային ամռնիումի, այսինքն  $4\frac{1}{2}$  տոնն  
յերկու տեսակ տարբեր պարարտանյութերի փոխարեն  
կարելի յե գործածել միայն մեկ տոնն: Մի քանի մննդա-  
նյութ պարունակող պարարտանյութը, վորը բարդ պա-  
րագանեալուր ե կոչվում, այնպիսի հարմարություններ և  
անտեսապես ձեռնոտու պայմաններ ե ստեղծում, վորոնց  
առավելություններն ակնհայտ են և ապացույցի կարիք  
չեն զգում:

Վորոշ յերկրներում, գլխավորապես Ամերիկայում,  
գործածվում ե այնպիսի բարդ պարարտանյութ, վորը  
միաժամանակ պարունակում ե լեռեք սննդանյութեր՝ ա-

զոտ, Փռսֆոր ու կալիում. այդ պարարտանյութը, վոր կոչվում է ազոմուկ, ամենից շատ գործածվում է այն-պիսի կուլտուրաների գեղքում (որինակ՝ կարտոֆիլի), վորոնք միաժամանակ կարիք են զգում բոլոր մննդանյութերի: Այնուհետև պետք է պարզել թե վոր շրջանում, ինչպիսի հողային պայմաններում ավելի նպատակահարմար ե գործածել այս կամ այն պարարտանյութը: Այդ հարցին պատասխանելու համար անհրաժեշտ է պարզել թե ինչպիսի փոփոխություն ե տեղի ունենում այս կամ այն պարարտանյութը հողի մեջ մուծելուց հետո: Որինակի համար վերցնենք ազոտական վորեե պարարտանյութ, ասենք՝ սովորական սելիտրան: Յերբ այդ պարարտանյութը մուծում ենք հողի մեջ, նա լուծվում և խառնվում է այնտեղ յեղած ջրի հետ: Այդ լուծույթի մեջ սելիտրան բաժանվում է իր բաղկացուցիչ յերկու մասերին՝ ազոտի և նատրիումի: Կուլտուրական բույսն իր արմատային ցանցով հողի այդ լուծույթից վերցնում և ոգտագործում է իրեն հատուկ անհրաժեշտ աղոտը, իսկ նատրիումը մնում է այնտեղ և աստիճանաբար կուտակվում: Նատրիումի կուտակման հետևանքով հողի մեջ առաջանում է հիմքային (շոռ) միջավայր: Յեթե սելիտրայի փոխարեն վերցնենք ծծմբաթթվային ամոնիակ, այն ժամանակ նույն ճանապարհով հողի լուծույթի մեջ առաջանում է ծծմբական թթու և ազոտ պարունակող ամոնիում: Ազոտը լուրացվում է բույսի կողմից, իսկ ծծմբական թթուն մնում է և հողի մեջ աստիճանաբար առաջանում թթու միջավայր: Աչտեղից արդեն պարզ է, վոր բամբակացան շրջանների հողերում, վորտեղ տիրում է հիմքային կամ չեղոքին մոտ միջավայր, ավելի նպատակահարմար ե գործածել ծծմբաթթվային ամոնիակ, քան սելիտրա: Դրան հակառակ, Խորհրդային Միության քան

հյուսիսացին շրջաններում, որինակ՝ Լենինգրադի մարզում, վորտեղ պողպոլ հոգերում տիրում ե թթու միջաւացը, ավելի ձեռնառու յեւ սելիտրացի գործադրումը, քան ամոնիակիւ Յիանամիգը, վորը պարունակում ե կալցի, դրական կերպով ե ազդում և հարավացին շրջանների փոշիացած, ստրոկուրայից զուրկ հոգերի, և հյուսիսի պողպոլացած հոգերի վրա:

Ալժմ վերցնենք ֆոսֆորական պարարտանյութերը: Վերևում ասացինք, վոր սուպերֆոսֆատը հեշտությամբ ե լուծվում ջրի մեջ, իսկ ֆոսֆորիտը լուծվում ե միայն թթու միջավայրում: Այստեղից պարզ է, վոր նպատակահարմար չեւ բամբակացան շրջանների հոգերում գործածել ֆոսֆորիտ. այստեղ պետք ե տալ լուծելի սուպերֆոսֆատ:

Այստեղից կարող ե հարց ծագել թե չի կարելի արդյոք սուպերֆոսֆատը կամ ազոտական թթու պարարտանյութը (ծծմբաթթվային ամոնիակը) գործածել նաև հյուսիսացին շրջանների կամ ընդհանրապես թթու հոգերում: Իհարկե, կարելի յեւ: Մենք ունենք բոլոր հնարավորությունները կանոնավորելու հողային պալմանների ու պարարտանյութերի հակադիր պահանջները: Որինակ՝ մեր բարձրագիր լեռնային շրջանների լեռնամարզակին հոգերում ևս կարող ենք գործածել թթու առաջացնող պարարտանյութ: Այստեղ ընթերցողը կարող ե իրավացիորեն հարց տալ. չե՞ վոր նման պարարտանյութն ուժեղացնելու յեւ այդ հոգերի թթու միջավայրն ու անդրադառնալու յեւ բույսի ու նրա բերքի վրա: Նման պայմաններում, նախքան թթու պարարտանյութ տալը, մենք պետք ե հողի մեջ վորոշ քանակությամբ կիր մուծենք. թթու հոգերը նախապես կրացնելուց հետո կարող ենք նրանց տալ և թթու պարարտանյութ, վորի ազդեցու-

թյան տակ բերքը կբարձրանա նույն հաջողությամբ,  
ինչպես և վոչ թթու հոգերում: Ուրեմն, մենք հնարավո-  
րություն ունենք մեր տարբեր պայմաններում ոգաազոր-  
ծելու այն բոլոր տեսակի պարարտանյութերը, վորոնք  
մեղ տալիս ե մեր՝ հայրենի արդյունաբերությունը: Այդ  
խնդիրը լուծելու գեպքում պետք ե յելնել վոչ միայն  
մեր հողային ու անտեսական պայմաններից, այլև մեր  
հնարավորություններից և ժողովրդական անտեսության  
այլ ճյուղերի ու յերկրի պաշտպանության կարիքներից:

Մյուս կարևոր խնդիրն այն ե, թե այս կամ այն  
պարարտանյութը յերբ պետք ե մուծել հողի մեջ: Այդ  
հարցը լուծելու համար առաջին հերթին պետք ե հաշվի  
առնել հողային պայմանները, պարարտանյութերի ա-  
ռանձնահատկությունները և նրանց լուծունակության  
աստիճանը: Որինակ՝ հեշտությամբ լուծվող ազոտի պա-  
րարտանյութը թեթև ու ավազու հողերում, ուժեղ անձնե-  
ներից կամ վոռոգումից հետո, վողովում ե և ջրի հետ  
միասին հողից դուրս տարիվելով, անողութ կորչում ե:  
Այդ պատճառով թեթև հողերում նման պարարտանյութը  
պետք ե տրվի վոչ թե միանգամից, այլ մի քանի ան-  
գամ, աստիճանաբար: Դրան հակառակ ծանր ու կավա-  
յին հողերում այդպիսի վտանգ չկա: Նույնը վերաբերում  
ե և կալիբումին: Ֆոսֆորական պարարտանյութերը, վո-  
րոնք համեմատաբար դժվար են լուծվում և զգալի չա-  
փով կանվում հողի կողմից, հողի մեջ պետք ե մուծել  
ավելի շուտ, քան ազոտը:

Ամենից լավ ե, յերբ պարարտանյութը տրվում ե  
մի քանի անգամ, իսկ թեթև հողերում դա արդեն պար-  
տադիր պահանջ ե դառնում: Մեր ստախանովականների  
փորձը ցույց ե տալիս, վոր բարձր արդյունք ե ստաց-  
վում նաև այն գեպքում, յերբ պարարտանյութը տրվում

Ե շարքերով, կուլտուրական բույսերին մոտ տարածության վրա և այն մաս-մաս: Բացի դրանից, թանգարժեք կուլտուրաների դեպքում, որինակ՝ բամբակի դաշտերում, պարարտանյութ կարելի յե մուծել ուղղակի առանձին բույսերի տակ, անմիջապես, իսկ առաջին անգամ՝ հերկի ժամանակ:

Պարարտանյութերի քանակի խնդիրը դեռ մնում է անորոշ: Սոցիալիստական դաշտերի հերոսները գործնականում դեն են շվրտել այն բոլոր նորմաները, չափերը, վորոնք հայտնի յեն յեղել մինչ այժմ և վորոնք տրվել են մեր փորձադաշտերի կողմից:

Պարարտանյութերի նորման վորոշելու ժամանակ պետք է նկատի ունենալ գործի տնտեսական կողմը, տարբեր հողերի բերրիության աստիճանը, նրանց պահանջն այս կամ այն աննդանյութի հանդես, ինչպես նաև առանձին կուլտուրաների պահանջները: Որինակ՝ մի շարք բույսեր (որինակ՝ ցորենը) պահանջում են մեծ քանակությամբ ֆուֆոր, մի ուրիշը՝ (ճակնդեղ, կարտոֆիլ)՝ կալի, մի յերրորդը (կաղամբ)՝ ազոտ և աղին:

## ՀՈՂԻ ՀՈՒՄՈՒՍԸ ՅԵՎ ՈՐԳԱՆԱԿԱՆ ՊԱՐԱՐՏԱՆՅՈՒԹԵՐԸ

Առաջին գլխում, վորտեղ խոսեցինք. բերքի համար մզված լերկարատն պայքարի պատմության մասին, մենք տեսանք, վոր բազմաթիվ հետազոտությունների ու դիտական վեճերի միջոցով պարզվել ե, վոր բույսը մնվում է ջրի մեջ լուծվող հանքալին նյութերով: Բայց դրա հետ միասին լրիվ չափով չպարզվեց այն հսկայական դերը, վոր բույսի կլանքում խաղում է հողի մեջ յեղած որդանական նյութը կամ նրա հումուսը: Այդ պատճառով թերերի հումուսալին՝ թեորիայի տապալումից և լիբիխի

թեորիալի հաղթանակից հետո հողի հումուսի վրա սկսեցին նայել իբրև մի յերկրորդական նյութի:

Գործնական կյանքում հումուսի խնդիրն ստանում ե այլ գնահատական. դաշտերի բերքատվության փաստացի տվյալներն ամբողջ աշխարհում ցուց են տալիս, վոր հումուսի հարուստ հողերը, որինակ՝ սևահողերը, ավելի բերքատու լին, քան հումուսով աղքատները, որինակ՝ պոդղոները: Բոլորին հայտնի լե, վոր վերջին աեսակի հողերն առանց ուժեղ պարարտացման աճնախիսի բերք չեն տալիս, ինչպիսին տալիս են բնական սևահողերը: Միայն հետագա հետազոտությունները պարզեցին, վոր բույսի սննդառության, ուրեմն և բերքի բարձրացման, գործում հողի որդանական նյութը՝ հումուսը մեծ դեր է խաղում:

Հումուսն առաջանում ե բուսական և կենդանական միացորդների քայքայման ու տարրալուծման հետևանքով: Բույսերից հումուս առաջանալու և նրա հետագա քայքայման ընթացքը կարելի յե համեմատել ծառերից ածուխ ստանալու և այդ ածուխի հետագա ալրման, փոշիացման ընթացքի հետ: Յերբ փայտի կտորներն այրվում են թաց ու ծածկված, ողից զուրկ պայմաններում, նրանց ալրման ընթացքը լինում ե շատ դանդաղ և այդ ճանապարհով ստացվում ե միայն ածուխ: Իսկ յեթե վերցնենք չոր փայտ և ալրենք բացովյա, այն ժամանակ նրանից կըստացվի վոչ թե ածուխ, այլ փոշի, այսինքն հանքային նյութ: Ահա, հողի հումուսը, վորն ստացվում ե բույսերի դանդաղ քայքայման ընթացքում, կարելի յե համեմատել ածուխի հետ: Ինչպես վոր ածուխն ալրվում և տալիս ե փոշի, այնպես ել հումուսը բակտերիաների միջոցով հետագայում տարրալուծվում ե և աղատում նրա մեջ յեղած աղատն ու հանքային նյութերը: Հումուսից ստացած հանքային նյութերի մեջ կարելի յե գտնել

զգալի քանակությամբ ֆոսֆոր, կալիում, կալցի, ծծումբում մի շարք այլ նյութեր, վորոնք հողի մեջ անցել են բույսերից, իսկ բույսերն ստացել են հողից Հումուսի մեջ յեղած թանգարժեք սննդանյութերը՝ աղոտը, ֆոսֆորը, կալիումն այնքան ուժեղ են կապված իրար հետ, վոր կուլտուրական բույսերը չեն կարողանալ անհրաժեշտ չափով ուստափորձել այդ սննդանյութերը: Բերքի համար անհրաժեշտ սննդանյութերը կարծեք թե, կապվում են հումուսի մեջ և մեռած, անշարժ պաշարի վերածվում: բայց այդպես թվում ե միայն առաջին հայացքից, իսկ ավելի մոտ ծանոթանալուց հետո պարզվում ե, վոր դա այդպես չե: Հողի հումուսը բակտերիաների միջոցով անընդհատ քայլացնելում ե և աստիճանաբար ազատում իր մեջ յեղած աղոտը, ֆոսֆորը, կալիումը, և այն ել լուծելի ու բույսի համար մատչելի ձևով: Դեռ ավելին՝ հումուսի քայլացման ընթացքում առաջանալում ե մեծ քանակությամբ ածխաթթու, վորը ածխածնի միակ աղբյուրն ե բույսի համար: Հումուսն իր մեջ յեղած հանքավելին սննդանյութերն աղատում ե վնչ թե միանդամից (այդ դեպքում նրանք կլուծվելին և անձրեների հետ տարվելով, անողութ կկորչելին), այլ աստիճանաբար: Այսպիսով, ուրեմն, հողի հումուսը թեև անմիջապես չի սնում կուլտուրական բույսին, բայց հանդիսանալում ե կենտրոնական խնայողական մի արկղ, վորը կուտակում ե բերքի համար ծայր աստիճան անհրաժեշտ սննդանյութեր, վերջիններս պաշտպանում վողողումից և աստիճանաբար աղատում բույսի համար մատչելի ձևով:

Սակայն սրանով չի սահմանափակվում հումուսի գերը հողի մեջ: Հումուսը վճռական գեր ե խաղում հողի մեջ բարենպաստ ստրուկտուրա ստեղծելու գործում, լավացնում ե ծանր կավալին հողերը, կապում ավաղուսները

և դրանք ջուր պահելու ընդունակ դարձնում, հողային լուծուլթից սննդանյութեր կլանում ու պահում, նպաստում և հողի ջերմության բարձրացման, վոր նույնպես անհրաժեշտ ե բույսի նորմալ զարգացման համար: Այդ բոլորն ապահովում և ողի ու ջրի ազատ շրջանառությունը հողի մեջ և նպաստում արմատային ցանցի ազատ զարգացմանը:

Ահա թե ինչու գյուղատնտեսական պրակտիկ աշխատողները հիմք ունեն հողի բերքատվության աստիճանը մեծ չափով կապելու հումքավի համեմատական քանակի հետ:

Այստեղից արդեն պարզ է, վոր բարձր բերք ստանալու համար, անհրաժեշտ է հանքային պարարտանյութերի հետ միասին հողի մեջ մուծել նաև որգանական նյութեր: Հումուսով աղքատ կամ թեթև ու ավագու հողերում՝ որգանական նյութերով պարարտացումն արդեն հրամայական անհրաժեշտություն ե դառնում:

Որգանական պարարտանյութերի շարքը պիտի դասել բոլորին ծանոթ գոմաղբը, տորֆը, կոմպոստը, մարդկանց կղկղանքը, արդյունաբերական ու անտեսական թափցուքները:

Գոմաղբը պարունակում ե բույսի համար անհրաժեշտ հիմնական բոլոր սննդանյութերը, դրա համար ել նա համարվում ե լրիվ պարարտանյութ: Բայց, դժբախտաբար, գործնականում այդ թանգարժեք նյութը հաճախ լրիվ կերպով չի ոգտագործվում, մասսամբ նաև այն պատճառով, վոր նրա մեջ յեղած աղոտը հեշտությամբ ողն ե ցնդում և անողուտ կորչում. իսկ Խորհրդային Հայաստանի պայմաններում գոմաղբը գլխավորապես ծառայում է իրեր վառելանյութ և, այդ պատճառով, շատ քիչ ե ոգտագործվում իրեր պարարտանյութ:

Վերեսում ասացինք, վոր որդանական նյութերը նը-  
պաստում են հողի մեջ լավ ստրուկտուրա ստեղծելուն:  
Սակայն միայն որդանական նյութը ինքն իրեն գեռ չի  
կարող հատիկավոր ստրուկտուրա ստեղծել: Նման ստրուկ-  
տուրա ստեղծելու համար անհրաժեշտ ե հողի մասսան  
վերածել նուրբ կտորների և ապա այդ առանձին կտոր-  
ներն իրար հետ ցեմենտել կայցնել ամուր հատիկների  
վերածել, անպիսի հատիկների կամ կնձիկների, վորոնք  
անձրեսի կամ վոռոգման ջրի ազդեցության տակ արագ  
կերպով չփշրվեն:

Հստ ակադեմիկ Վիլյամսի տեսության, վորը հաս-  
տատվում է պրակտիկ փորձերով և ընական պարմաննե-  
րում տեղի ունեցող լերեւությներով, հողի մեջ կնձկանման  
լավ ստրուկտուրա կարելի յե ստեղծել բազմամյա հացազգի  
խոտաբուլսեր ցանելու միջոցով: Այդ բուլսերն իրենց լավ  
զարգացած նուրբ արմատալին ցանցի ովնությամբ հողը  
վեր են ածում նուրբ մասնիկների և, մեռնելուց հետո,  
հողի մեջ թողնում մեծ քանակությամբ բուսական մաս-  
սա: Վերջինս տարրալուծվելով տալիս ե թարմ որդանա-  
կան նյութ, վորը համաշափ կերպով ծծվում է հողի նուրբ  
կուլտերի մեջ, ամբացնում դրանց և, այլպիսով, ստեղծում  
լավ ստրուկտուրա: Յեթե հացազգի խոտաբուլսերին խառ-  
նանք նաև թիթեռնածաղիկ բուլսեր, որինակ՝ առվույտ,  
վորը տալիս ե որդանական նյութերի մեծ մասսա, ան  
դեպքում լավ ստրուկտուրա կարելի յե ստեղծել ավելի  
կարճ ժամանակամիջոցում:

Խորհրդավին Հայաստանի բամբակացան շրջաններում  
առվույտի մշակումն զգալի կերպով լավացնում է հողավին  
պարմանները: Առվույտի ազդեցության տակ հողը, համա-  
ձայն մեր տվյալների, կուտակում է մեծ քանակությամբ  
որդանական նյութ, ագոտ, լավանում ե նրա ստրուկտուրան,

պակասում ե՞ վխասակար աղերի քանակը և, այս բոլորից հետո, մի քանի տարի շարունակ բամբակը լավ բերք է տալիս: Առվույտի մշակույթը նույնպիսի դրական արդյունք է տալիս նաև մյուս հանրապետություններում: Պարզ է, վոր առվույտը, բացի հողը պարարտացնելուց, սոցիալիստական անասնապահությանը բարձրորակ կեր է մատակարարում: Բազմամյա խոտաբույսերի այդ մի շարք դրական հատկությունները, վորոնց հետևանքով հողի մեջ ստեղծվում են հետագա կուլտուրաների զարգացման և բարձր բերքի համար բարենպաստ պայմաններ, հիմք են տալիս այդ խոտաբույսերը ցանքաշրջանառության մեջ մտցնելու:

Բացի գոմաղբից, վորպես որգանական պարարտանյութ կարող է ծառալել նաև կոմպոստը, վորը հնարավոր է պատրաստել յուրաքանչյուր կոլտնտեսության և խորհունակության պայմաններում: Յեթե հավաքենք տնտեսության մեջ յեղած կենդանական մնացորդները՝ վոսկորները, արյունը, կաշվի ու բրդի կտորները, փշացած կերը, խոտերը, բույսի տերենները, աղբը, խոհանոցի մնացորդները, փայտնը և այլ նյութերը, դրանք տեղափորենք մի փոսի մեջ, դրանց հետ խառնենք փոշի կամ ուղղակի հող, թթվենք կենդանիների մեզով կամ ուղղակի ջրով, վորոշ ժամանակից հետո կստանանք կոմպոստ: Այդ ճանապարհով պատրաստված կոմպոստը պարունակում է բույսի համար անհրաժեշտ բոլոր մնադանյութերը:

Խորհրդային Հայաստանի լեռնային շրջաններից շատերում կոմպոստ պատրաստելու համար նյութ կարող է ծառայել տորֆը, վորը կուտակվում է ճահճոտ վայրերում, որինակ՝ Բասարգեշտը մոտ, Ամասիայի շրջանում և այլն: Տորֆը, իբրև որգանական պարարտանյութ, կարելի յէ գործածել, բայց լավ է նրան խառնել վորոշ քանակությամբ գոմաղբ և փոշի: Բացի դրանից, մեր շրջաններում կարելի լի

պատրաստել նաև արհեստական գոմաղբ։ Վերջինս պատրաստելու համար պետք է վերցնել կտրտված ծղոտ կամ ուղղակի դարման, տեղափորել փոսի մեջ, դրան շերտ-շերտ խառնել աղոտ պարունակող պարարտանյութ, որինակ՝ սեմփարա կամ ծծմբաթթվային ամոնիակ, և ալդ խառնուրդը թրչել ջրով կամ, ավելի լավ ե, մեզով։ Բակտերիաների ազդեցության տակ այդ խոնավ խառնուրդն աստիճանաբար տարրալուծվելով վեր և ածվում գոմաղբանման մասսայի։ Այս յեղանակով պատրաստված արհեստական գոմաղբը մեծ արժեք ունի և վորպես պարարտանյութ գործադրելու դեպքում մեծ չափով նպաստում ե բերքի բարձրացմանը։

Վերջապես, մեր տրամադրության տակ, և այն ել մեծ քանակությամբ, կա որգանական մի նյութ, վորն իբրև պարարտանյութ ավելի բարձր և և ավելի արժեքավոր, քան բոլոր մյուս պարարտանյութերը և նույնիսկ գոմաղբը։ Դա մարդկանց մեջն ու կղկղանքն ե, վորը «գիշերային վոսկի» լե կոչվում։ Կապիտալիստական առաջավոր յերկրներում մարդկային այդ արտադրանքը լայն չափով ոգտագործվում ե — դրանից պատրաստում են զանազան նյութեր և պարարտանյութ՝ փոշի վիճակում։ Մեծ քաղաքների շրջակայքում գտնվող դաշտերը, ալգիները, բանջարանոցները պարարտացվում են քաղաքի արտադրած այդ «գիշերային վոսկով»։

«Գիշերային վոսկին» պարունակում ե բույսի համար անհրաժեշտ և արժեքավոր մեծ քանակությամբ աղոտ, ֆոսֆոր, կալիում և այն ել միանգամայն մատչելի ձեռվ՝ Բայց, դժբախտաբար, մենք դեռ չենք ոգտագործում այդ թանգարժեք պարարտանյութը։ Վորպեսզի պարզ լինի, թե ինչպիսի հսկայական արժեք ունի մարդու կղկղանքը, անհրաժեշտ ե բերել մի քանի թվեր։ Այսպես որինակ՝ մի

տարվա ընթացքում մի ժարդը մեղի ու կղկղանքի հետ, միջն հաշվով արտադրում է մինչև 5 կգ ազոտ, 1<sup>1/2</sup> կգ ֆոսֆոր և 1 կգ կալիում: Իսկ դա նշանակում է, վոր մի կուտնաեսություն, վոր ունի 2000 հողի, մի տարվա ընթացքում դեն և շպրտում, անոգութ կորցնում 10 տոնն ազոտ, 3 տոնն ֆոսֆոր և 2 տոնն կալիում: Ազոտի, ֆոսֆորի և կալիումի այդ քանակը բավական է 500 տոնն ցորենի բերք ստեղծելու համար: Ուրեմն, 2000 հողի ունեցող կուտնաեսությունն այդ հարստությունը լրիվ ոգտագործելու դեպքում կարող է ստանալ 500 տոնն ավելի ցորեն:

Հաշվելով Խորհրդային Միության, մեր լախածավալ մեծ հայրենիքի 193 միլիոն քաղաքացիների «գիշերային վուկու» տարեկան արտադրանքը և այն վերածելով ազոտի, կտեսնենք, վոր այդ ճանապարհով արտադրած ազոտի պաշարն ավելի շատ ե, քան յեփրոպական մի քանի խոշոր պետությունների քիմիական արդյունաբերության ամբողջ արտադրանքը: Մեր գյուղերում անհրաժեշտ է կառուցել արտաքնոյներ, վորոնք այդ վայրերում հաճախ բացակայում են: Արտաքնոյների տակ սկզբնական շրջանում կարելի յե գնել սովորական հասարակ արկղներ, վորոնք հնարավորություն կտան հավաքված կեղտառությունները մոտակա դաշտերը փոխադրել և հողի մեջ վարել: Արտաքնոյներում պիտի փոել չոր գոմազը, փայտն, դարման, տորֆի մանրունք, կիր և ալյն, վորոնք անհրաժեշտ են վոչ միայն առողջապահական տեսակետից, այլև այն տեսակետից, վոր դրանք կապում են կղկղանքի ու մեղի ամիակը, թույլ չեն տալիս, վոր այդ արտաթորանքի մեջ յեղած ազոտն ողը ցնդի և անոգութ կորչի: Մարդու արտաթորանքը փոխադրելու, դաշտում հավասարաշափ փոելու և վարելու գործողությունը հեշտացնելու համար կարելի յե

արտաթորանքին խառնել վորոշ քանակությամբ դաշտավին  
սովորական հող, կամ նույնիսկ փոշի: Այդ ձեռվ պատրաստ-  
ված «գիշերալին վոսկին», իբրև պարարտանյութ, ել ավելի  
բարձր արժեք և ստանում:

## ՆՈՐՆ ՈՒ ԶՈՒՐԸ

Ինչպես հայտնի յե, ջուրը կուլտուրական բույսերի  
համար այնքան կարեոր ե, վոր նրա բացակայության և  
նույնիսկ պակասության դեպքում, ինչքան ել հողն ապա-  
հովված լինի անդամյութերով, միևնույն ե, անհնարին և  
բավարար բերք ստանալ:

Ջուրը բույսի համար անհրաժեշտ ե, մի կողմից՝ իբրև  
անունդ, իսկ մյուս կողմից՝ իբրև նրա զարգացման մի շարք  
գործողություններն ապահովելու կարեոր միջոց: Ջուրը  
մտնելով տերենների, ցողունների և պտուղների մեջ, կազ-  
մում և նրանց հիմնական մասը: Ջրի շրջանառության չա-  
փը պարզ պատկերացնելու համար կարելի լի մի քանի  
թվական՝ տվյալներ բերել: Այսպես որինակ, միջին պար-  
մաններում 25 ցենտներ ցորենի բերք ստանալու համար  
անհրաժեշտ է 1000 տոնն ջուր: Նոր-Բայազետում վեղե-  
տացիոն շրջանի չորս ամսվա ընթացքում 232 մմ անձրե-  
և դալիս, Լենինականում՝ 228 մմ, Ախտայում՝ 218 մմ: Այդ  
թվերը վերածելով վորոշ տարածության, կարելի լի  
տեսնել, վոր մի հեկտարի վրա նույն չորս ամսվա ընթաց-  
քում ստացվում է նոր-Բայազետում՝ 2320 տոնն ջուր,  
Լենինականում՝ 2280 տոնն, Ախտայում՝ 2180 տոնն: Այս-  
տեղ մենք դեռ հաշվի չենք առնում ջրի այն պաշարները,  
վորոնք առաջանում են մյուս ամիսներին տեղած անձրե-  
ներից, ձյան հալվելուց և ողի խոնավության խտացած  
գոլորշիներից: Ջրի այդ քանակն ընդունակ և ստեղծել 100  
ցենտներից վոչ պակաս բերք, այնինչ վերը հիշված շրջան-

ներում հաճախ բերքը վոչնչանում և յերաշտից: Ալդ հաշիվերը ցույց են տալիս, վոր, մի կողմից՝ կուլտուրական բույսերի պահանջը ջրի հանդեպ հսկայական ե, իսկ մյուս կողմից՝ մենք չենք կարողանում ջրի պաշարները լրիվ չափով ոգտագործել: Սոցիալիստական դաշտերի հերոսները՝ ստախանովականները, նման պայմաններում մի հեկտարից ստանալով 70—80 ցենտներ բերք, գործնականում ապացուցեցին, վոր ծայր աստիճան խնայողաբար վերաբերվելով ջրի ամեն մի կաթիլին, նրա յեղած պաշարներով կարելի յե վոչ միայն հաղթահարել յերաշտը, այլև հսկայական բերք ստանալ:

Ի՞նչն ե պատճառը, վոր մենք չենք կարողանում լրիվ չափով ոգտագործել ջրի այդ բոլոր պաշարները: Պատճառն այն ե, վոր փոշիացած, ստրուկտուրավից զուրկ մեր հողերը անձրևների ժամանակ դժվարացնում են ջրի մուտքը հողի մեջ: Իսկ յերբ այդ ջուրը չի կարողանում ներծծվել հողի մեջ, գետնի յերեսով հոսում, կորչում ե, հեղեղներ ե առաջացնում, գաշտ ու ալգի քանդում, ժողովրդական տնտեսության զանազան ճյուղերին մեծ վնաս հասցնում: Փոշիացած հողի մեջ դժվարությամբ մտած ջուրն ել անձրևից հետո արագ կերպով դոլորշիանում և անողուած կորչում ե: Ահա այդ ե պատճառը, վոր նման պայմաններում, յերկարատե աշխատանքի արդյունքը՝ բերքը յերաշտին գոհ ե գնում: Այն դեմքում, յերբ հողը միշտ խառնում են, լավ մշակում, փուլք պահում, հատիկավոր ստրուկտուրա ստեղծում, անձրևից ու ձյան հալվելուց առաջացած ջուրը լրիվ կերպով մանում ե հողի մեջ, գորշշիացումը դադարում ե և ջրի ամբողջ պաշարը բոււխի համար մատչելի յե դառնում:

Այժմ մի քանի խոսք ջրի սպասարկող դերի մասին Մենք արդեն գիտենք, վոր բուլսի սննդառության դործում

ջուրը տրանսպորտի դեր ե կատարում. նա միակ միջոցն է, վորի շնորհիվ տարբեր սննդանութեր փոխադրվում են մեկ տեղից մյուսը, խորը շերտերից բարձրանում են գեղի վերե, անցնում են բույսի մեջ և դասավորվում: Բացի դրանից՝ կանաեմի ուրիշ շատ կարեոր աշխատանք, վորը կատարվում է նույնպես ջրի միջոցով: Մենք գիտենք, վոր մեր մի շաբթ ըրջաններում ամառվա ընթացքում շատ շող ե լինում: Չողի ժամանակ քարերը, հողը, ավազն այնքան են տաքանում, վոր ձեռներս լեթե դնենք նրանց վրա, լերկար պահել չենք կարող: Բաց լեթե շոշափենք այդ քարերի կողքին բուսած բամբակի կամ խաղողի վազի տերեները, կտեսնենք, վոր նրանք այնքան տաք չեն: Յեթե կուլտուրական բույսերը դաշտում ամառ ժամանակ նույնքան տաքանան, վորքան քարերը, նրանք անմիջապես կվոչնչանան բայց ինչ ե պատճեռում, վոր մինչդեռ ոդոստոս ամսին, որինակ՝ Հոկտեմբերլանի ըրջանում կիղիչ արել խիստ տաքացնում ե քարերը, իսկ բույսերը շարունակում են պահել իրենց կլանքի համար պիտանի ջերմաստիճանը: Հարց ե ծագում, թե ուր ե գնում արեի տաքությունը: Ալիք գաղտնիքը պարզելու համար կարելի յե բերել հանրածանոթ մի որինակ: Ամառվա շողին մարդիկ թելի մեծ պահանջ են զգում: մի քանի բաժակ թել խմելուց ե լավ բրանելուց հետո նրանք արդեն այնքան ել շող չեն զգում: Դրա պատճառը հետեւալն ե, այն ջուրը, վոր գոլորշիանում ե և քրտինքի վերածվում, կլանում ե մեծ քանակությամբ տաքություն: շող պատճառող ջերմության զգալի մասը, ալսպիսով, ծախսվում ե խմած ջուրը գոլորշիների վերածելու համար: Ան ալիք նույնը կատարվում է կուլտուրական բույսերի մեջ: Բույսի համար ավելորդ, նրա կլանքին վնասող տաքությունն ամբողջովին ծախսվում ե ջուրը գոլորշիացնելու վրա: Ար-

մատավին ցանցը հողից անընդհատ ջուր ե բարձրացնում  
դեպի բույսի տերևները, վորտեղից այդ ջուրը նույնպես  
անընդհատ գոլորշիանում ե, և գոլորշիացման միջոցով  
բույսը կարգավորում ե իր ջերմաստիճանը և իրեն ապա-  
հովում այնքան տաքությամբ, վորը համապատասխանելով  
նրա կյանքի պահանջներին, նպաստում ե նրա զարգաց-  
մանը: Իսկ յերբ հողի մեջ յեղած ջրի պաշարն սպառվում  
ե, այն ժամանակ բույսի ջերմաստիճանն արևի տակ բարձ-  
րանում ե, և բույսը չորանում, վոչնչանում ե:

## ԵԼ ԻՆՉ Ե ՀԱՐԿԱՎՈՐ

Մինչև այժմ մենք խոսեցինք այն մասին, վոր հողի  
մեջ այս կամ այն սննդանյութի կարիքը լինելու գեպքում  
այդ պակասը պետք ե լրացնել արհեստական կերպով՝  
զրոխ տարբեր պարարտանյութեր մուծելու ճանապար-  
հութ: Սոցիալիստական շինարարության խոշորագույն հաղ-  
թանակները և այդ հաղթանակների կապակցությամբ մեր  
քիմիական արդյունաբերության զարգացման բնագավա-  
ռում ձեռք բերված հսկայական տեմպերը Ստալինան հըն-  
դաշյակների ընթացքում սոցիալիստական հողագործության  
տրամադրության տակ զրին միլիոնավոր տոնն զանազան  
տեսակի պարարտանյութեր, վորոնք հզոր միջոց են մեր  
գաշտերի բերքատվության բարձրացման գործում:

Սակայն կարո՞ղ ենք արդյոք սահմանափակվել միայն  
այն պարարտանյութերով, վոր տալիս ե մեր քիմիական  
արդյունաբերությունը: Ինարկե, վ՞ո՞չ: Քիմիական պարար-  
տանյութերի հետ միասին լայն չափով պետք ե ոգտագոր-  
ծել տեղական միջոցները, վորոնք պարունակում են բույսի  
համար անհրաժեշտ սննդանյութերի մեծ պաշար, պետք ե  
վերին աստիճանի ինսայոզաբար ծախսել հանքային պա-  
րարտանյութերը, մանավանդ վոր նրանք անհրաժեշտ են

նաև յերկրի պաշտպանության, մեր խաղաղ ու ստեղծագործական աշխատանքն ապահովելու գործում:

Հաճախ ե պատահում, յերբ հողի մեջ մեծ քանակությամբ թանգարժեք ազոտ կամ ֆոսֆոր ե մուծվում առանց համապատասխան արդյունք ստանալու: Ի՞նչն ե պատճառը, վոր հողի մեջ մննդանյութ մուծելուց հետո կուլտուրական բույսերը վորոշ գեպքերում չեն բարձրացնում իրենց բերքը: Ինչպես գիտենք, բույսը կենդանի եյակ ե, վորի պահանջները բաղմակողմանի յեն և այդ պատճառով միայն մնունդը չի կարող լիովին ապահովել նրա կյանքի բոլոր պայմանները: Գուցե բոււսը խիստ կարիք ե զգում ողի կամ ջրի, իսկ մենք նրան ֆոսֆոր ենք հրամցնում. դա նույն ե, թե ծարավից մեռնող մարդուն հարկադրաբար կերակրենք աղի ձկնով: Պարզ ե, վոր բարձր բերք ստանալու համար հողի պարաբռացումը դեռ բավական չե: Հողի մեջ յեղած մննդանյութերը, ինչպես նաև գրսից մուծված պարաբռանյութերը, բակտերիաների միջոցով պետք ե վերամշակվեն, բույսի համար մատչելի դառնան, և քանի ուժեղ ե տեղի ունենում բակտերիաների ալդ գործունելությունը, այնքան արագ ու լրիվ ե ոգտագործվում հողի մննդանյութերի պաշարը: Իսկ բակտերիաների նորմայ աշխատանքը հնարավոր ե այն գեպքում, էերբ հողն ապահոված ե թարմ ողի պատ ըրջանառությամբ, անհրաժեշտ խոնավությամբ ու ջերմությամբ: Նույնը պահանջում ե ինքը՝ կուլտուրական բույսը: Ահա այդ պահմանները հողի մեջ կարելի յե ստեղծել լավ մշակման միջոցով: Հողի բարձրորակ մշակման և անընդհատ խնամքի գեպքում միայն հողի մեջ յեղած մննդանյութերի պաշարը բոււսի համար մատչելի կրանա, կուժեղանա ազոտի ու նիտրատների կուտակումը, բուսական մնացորդների վերամշակումը, որպահական նցութի՛ հումուսի տարրալուծումը և այլն: Ուրեմն արհեստական կերպով հողի

մեջ պարարտանյութ մուծելու հետ միասին պետք ե հատուկ խնամքով մշակել հողը: Վարելաշերտի աստիճանաբար խորացումը հնարավորություն և տալիս ոգտագործելու հոդի խորը շերտերում յեղած սննդանյութերի պաշարները: Փխրուն ու լավ ստրուկտուրա ունեցող հողը փոչ միայն կլանում, պահում և մեծ քանակությամբ ջուր և կասեցնում ջրի անոգուտ գոլորշիացումը, այլև անհրաժեշտ թարմողով ապահովում է հողի խորքերում յեղած բույսի արմատները և բակտերիաները: Աւրեմն պետք է հողը պահել վիսրուն և ստրուկտուրային դրությամբ: Բերքատվության բարձրացման կարևոր միջոցներից մեկն ել ճիշտ ցանքաշրջանառությունն ե՝ բազմաթիվ խոտարույսերի պարտագիր՝ մասնակցությամբ: Խոտարույսերն իրենց խորը թափանցող արմատալին ցանցով հողի խորքերից հավաքում և մակերեսի մոտ են փոխադրում սննդանյութերի հոր պաշար: Մեռնելուց հետո խոտարույսերը հողի մեջ թողնում են մեծ մասսա, վորից առաջանում է հումուս և վորի ոգնությամբ ստեղծվում է հատիկավոր ստրուկտուրա: Ահա այդ ստրուկտուրան և, վոր վճռական դեր է խաղում ջրի կուտակման ու խնայողության, լերաշաի դեմ՝ պայքարելու, սննդանյութերի լրիվ յուրացման և, ողի շրջանառությունը կանոնավորելու գործում: Բացի դրանից՝ նման լավ ստրուկտուրա ունեցող հողը հիշտ և հերկվում, ավելի պակաս վատելանյութ և աշխատանք և պահանջում: Պարզ ե, վոր ստրուկտուրային հողերում, շնորհիվ վերը թված նըլպաստավոր պայմանների, պարարտանյութերի բարենպատագղեցությունը բույսի բերքատվության բարձրացման վրա և ավելի լեռ ուժեղանում:

Այսուհետեւ պիտի հիշել մոլախոտերի դեմ՝ պայքարելու անհրաժեշտությունը: Մոլախոտերը կուլտուրական բույսերից խլում են մեծ քանակությամբ ջուր ու սննդա-

նյութ և, միաժամանակ, ճնշում, կասեցնում են նրանց նորմալ զարգացումը: Խոր հերկը և ճիշտ ցանքաշրջանառ ռությունը, սերմայվի զտման հետ միասին, մոլախոտերի սերմերից ազատվելու գլխավոր միջոցն են հանդիսանում: Քանի վոր մեր հողերը դեռ բավական վարակված են մոլախոտերի սերմերով, ուստի սովորական քաղհանը դեռ վորոշ ժամանակ մնալու յերբեք անխուսափելի միջոցառում: Պետք է անխնա վոչնչացնել մեր դաշտերի մոլախոտերը և թուլլ չտար, վոր նրանք սոցիալիստական բերքից խլեն և վոչ մի կաթիլ ջուր, վոչ մի պրամ մննդանլութ:

Զպետք ե մոռանալ, վոր արձեստական վոռոգման պայմաններում ջրի ավելորդ գործածումը փշացնում ե հողը: Զափից գուրս ջրելլը բույսին հնարավորություն չի տալիս խորն արմատներ զցել և բարձր բերք տալու համար անհրաժեշտ աննորանյութերի նոր պաշար հավաքել հողի խորքերից: Պետք է ջրել չափավոր, պետք ե խնայողաբար վերաբերվել մեր արամագրության տակ լեզած ջրի պաշարին. անխնա վերաբերմունքի հետևանքով առուներով, ճանապարհներով հարեւան գաշտերը փշացնելով հաճախ ավելորդ ջուր և հոսում, անոգուտ կորչում, մինչդեռ այդ ջուր կարելի յերգալի տարածությամբ նոր հողամասեր գոռոգել: Ջրելուց հետո, իերբ հողի մակերեսը վորոշ չափով չորանում ե, անհրաժեշտ ե վիսրեցնել վորպեսդի հողի մեջ ծծված ջուրը չգոլորշիանա ու պինդ կեղի չտուածանա, արմատները չզրկվեն թարմ որդից, և յերիստասարդ ծիլերը լինեղդիմն: Այս ըրջաններում, վորաեղ հողը չի վոռոգվում և վորտեղ բերքը տուժում է յերաշտից, անձրկից հետո հողի լերեսը վիսրեցնելն ուղղակի անհրաժեշտություն է դառնում. բացի դրանից, յերաշտից տուժող շըրջաններում պետք է լայն չափով ոգտագործել ձյան պաշարները: Յեթե աշնանից դաշտերում թողնվեն ծղոտի

կույտեր, առանձին փոքրիկ խուրձեր, չորացած քոլեր կամ  
տեղ-տեղ հատկապես տնկիլի արևածաղիկ (կարելի լի և  
յեղիպատացորեն) և նրանց ցողունները թողնվեն կանգնած,  
այն ժամանակ ձմեռվա ընթացքում նրանց շուրջը կհա-  
վաքվի ձևան վորոշ պաշար, վորն աստիճանաբար շատա-  
նալով՝ կկազմի բավականին հաստ շերտ Փարնասը ձևան  
այդ շերտը հալվելու հետ միասին, ջուրը կծծվի հողի մեջ։  
Փորձը ցուց ե տալիս, վոր այդ ճանապարհով միանգա-  
մայն հնարավոր ե անքան ջուր կուտակել հողի մեջ, վոր  
կարելի կիմնի ապահովել նորմալ բերքը նույնիսկ լեռաշտի-  
պայմաններում։ Այլև չենք խոսում այն մասին, վոր ձյան  
ծածկոցը պաշտպանում ե աշնանացանը ճմռան ցրտահա-  
րությունից։ Գլուղանանեսության մեքենայացումը և աղ-  
բոտեխնիկայի բոլոր կանոնների լիվ ու ժամանակին կա-  
ռարումը, ինչպիսիք են՝ վորակափոր խոր հերկը, ցրտա-  
հերկը, ընտիր ու զտված սերմերի գործադրումը, նրանց  
յարովիզացիան, ժամանակին կատարվող քաղհանը և այլն,  
նույնպես խոշոր գեր են խաղում բերքատվության բարձ-  
րացման գործում։ Դրա հետ միասին պիտի հիշել որըստորե-  
ծավալվող մասսայական ստախանովական շարժումը, սո-  
ցիալիստական աշխատանքի այդ բարձրագույն ձևը, վորը  
հնարավոր ե միայն մեր սոցիալիստական լերկրում, սո-  
ցիալիստական հողագործության պայմաններում և վորը  
կրկնապատկում ու յեռապատկում ե մեր ստեղծագործա-  
կան թափը և մեր դաշտերի աշխատանքը դարձնում վառ-  
քի, պատվի ու հերոսության գործ։

Ահա այն հիմնական միջոցառումները, վորոնք անհրա-  
ժեշտ են մեր հողերի բերքատվության բարձրացման հա-  
մար։ Սակայն պիտի ե նորից հիշենք, վոր այս կամ այն  
միջոցը ձեռնարկելիս չափազանց անհրաժեշտ ե հաշվի տու-  
նել լուրաբանչուր ովհանի հողային կոնկրետ պայմանները,

վորովինեան միանույն միջոցառումը մի գեղքում կարող է մեծ արդյունք տալ, իսկ մի այլ գեղքում ավելորդ կամ նույնիսկ վեասակար լինել: Որինակ՝ մեր բամբակագործական շրջաններում (Հոկտեմբերյանում, Վաղարշապատում) հողերն առաջին հերթին կարիք են զգում ազոտի ու ֆոսֆորի: Բայց չնորհիվ այդ հողերի փոշիացած վիճակի, չորրիվ այն հանգամանքի, վոր նրանց մեջ պակաս ե որգանական նյութերի քանակը, անհրաժեշտ ե դառնում հանգային պարարտանյութերի հետ միասին նաև հոգ տանել այդ հողերն որգանական նյութերով հարստացնելու և նրանց ստրուկտուրան բարելավելու ուղղությամբ: Այդ կապակցությամբ մեր բամբակագործական շրջաններում լայն տեղ պետք է տալ բազմամյա խոտաբույսերի մշակման, վորոնք հողը հարստացնում են որգանական նյութերով, լախացնում են նրա ստրուկտուրան և, այդպիսով, նպաստում բերքի բարձրացման (և տալիս վորակավոր կեր): Մեր լեռնային շրջանների (Ստեփանավան, Լենինական) սեած հողերը բավական որգանական նյութեր են պարունակում և, ինչպես տեսանք, ունեն բույսի համար անհրաժեշտ մեծ քանակությամբ մնադանյութեր, բայց այդ մնադանյութերը դժվարությամբ են յուրացվում բույսի կողմից: աշդ պատճենությունները, պարարտանյութ ստանալուց հետո, մեծ չափով բարձրացնում են իրենց բերքը: Լավ մշակման միջոցով հնարավոր և շարժման մեջ գնել ոգտագործել սեածողերի մեջ լեզած մնադանյութերի մեծ պաշարները: Ստրուկտուրան լավացնելու համար այս հողերը նույնպես կարիք են զգում խոտաբույսերի մշակման:

Այսպիսով, մենք տեսնում ենք, վոր բարձր բերք ստանալու նպատակով կուլտուրական բույսերի զարգացման բարենպատ պայմաններ ստեղծելու համար անհրաժեշտ ե հիմնավորապես ծանոթ լինել յուրաքանչյուր

Միջանի հողային պարմաններին և բուլսերի կարիքներին ու պահանջներին։ Միայն այդ գեղքում մենք ի վիճակի կլինենք յուրաքանչյուր կոնվրետ դեպքում վորոշել, թե ինչպիսի հնարավորություններ ունի հողը, ինչպիսի սննդանյութերի կարիք ունի նա, հողի վեր դրական հատկություններն են բացակայում, կուրտուրական բուլսերի վոր կենսական պահանջներն են մնում առանց բավարարելու և ալլն։ Տեղյակ լինելով այդ բոլորի մասին, մենք արդեն կարող ենք առանց սխալվելու մշակել այնպիսի միջոցառումներ, վորոնց կիրառումը կուրտուրական բուլսերը կդնի բարենպաստ պայմանների մեջ և միանգամայն կապահովի նրանց կանոնավոր աճը, զարգացումն ու բարձր բերքատրվությունը։ Բայց այդ միջոցառումները պետք են բազմակողմանի կերպով ընդգրկեն բույսի կրանքի բոլոր կողմերը, պետք են կապված լինեն իրար հետ և կիրառվեն միաժամանակ, համատեղ, կամ, ինչպես ասում են, պետք են լինեն կոմպլեքս։

Բարձր բերք կարող ենք ստանալ միայն այն դեպքում, յեթե հողը հերկենք խորը, լավ մշակենք, պահենք միջուկի փլարուն, նրա մեջ մուծենք բույսի համար անհրաժեշտ բոլոր սննդանյութերը, ապահովենք անհրաժեշտ խոնավություն ու ջերմություն, ցանքսաշրջանառության մեջ մշակենք բաղմամյա խոտաբուլսեր, գոչնչացնենք մոլախտարերը, պայքարենք վնասատուների դեմ, ժամանակին կատարենք բոլոր աշխատանքները և լավ կազմակերպենք աշխատանքը սոցիալիստական դաշտերում, փայփայենք ու գուրգուրենք յուրաքանչյուր բույս վորպես կենդանի ելակի և մոտ կանգնենք նրա կարիքներին ու պահանջներին... Յեթե մենք չկատարենք այդ բոլոր պահանջները, այլ սահմանափակվենք բույսի մի քանի կարիքները հոգալով, հատուկենում միջոցառումներով, այն դեպքում չենք

կարող սոցիալիստական մեր յերկրին արժանի բարձր բերք ստանալ:

Գյուղատնտեսական առաջավոր գիտությունն ահա յեկել և այդ ճիշտ լեզվակացության, վորպիսի գաղափարը տարիների ընթացքում համառ կերպով քարոզել և հանգուցյալ ակադեմիկ Վիլյամսը:

Մեր հայրենիքի արժանավոր զավակները, մեր սոցիալիստական դաշտերի հերոսները՝ ստախանովականները, մեծ բերքի մեր վարպետները են աշխարհում գեռչուսնված բերքի բարձրագույն աստիճանի, գործնականում իրականացնելով, ահա, առաջավոր գիտության այդ լեզվակացությունը՝ կոմպլեքս սկզբունքը Մինչև 100 ցենտներ ցորեն մի հեկտարից — առասպելական այդ թիվը մեր լերկում արդեն իրականություն ե դասեր: Մարիա Դեմչենկո, Ֆայզուլա Յունուսով և բարձր բերքի առաջին այլ վարպետներ արդեն վիթխարի բանակ են կազմում: Այն անվեհեր աշխատանքը, վոր նրանք կատարել և կատարում են սոցիալիստական դաշտերում, ցույց ե տալիս, թե բերքի մասսայական բարձրացման և համատարած ստախանովան դաշտեր ստեղծելու ուղղությամբ ինչպիսի անսահման հնարավորություններ ունենք մենք:

Յեվ մեր այդ հնարավորությունները կրկնապատկվում ու լեռապատկվում են, յերբ մենք գիտակցում և գործնականում զգում ենք, վոր մեր ստեղծագործական խաղաղ աշխատանքը միանգամայն ապահովված և մեր քաջարի ու պանծալի Կարմիր բանակի կողմից, վոր մեր հզոր աեխնիկան, արդյունաբերության հետ միասին, որըստորե ուժեղացնում է մեր գյուղատնտեսության նյութական հիմքը, վոր մեր սոցիալիստական կուլտուրան ու կոմունիստական գիտակցությունն անընդհատ աճում են և բարձրանում:

Սոցիալիստական մեր հայրենիքը գլուղատնտեսության ասպարեզում աշխատող մասնագետների վրա պատվոմեծ պարտականություն և դնում—ակտիվ կերպով նպաստել մեր լեռկրի գլուղատնտեսական արտադրության արագընթաց զարգացման կարևոր գործին:

Զինված լինելով առաջավոր գիտությամբ, անձնվեր ու համառ աշխատանքով, կատարելով բոլցիկայն փառապանծ կուսակցության ցուցումները, մենք պետք ե մեր գլուղատնտեսությունը բարձրացնենք այնպիսի աստիճանի, վորը դեռ ծանոթ չի կապիտալիստական և վոչ մի պետության: Մոտակա տարիների ընթացքում մենք պիտի համենք ու անցնենք տնտեսապես առաջավոր կապիտալիստական յերկրներից—այս ե մեր նպատակը, վոր դրել ե կուսակցության XVIII համագումարը:

Այդ նպատակին մենք պետք ե համենենք ամենակարճ ժամանակամիջոցում, վորովհետև այդ են պահանջում կոմունիզմ կառուցող 193 միլիոնանոց ժողովրդի շահերը: Յեվ դրան մենք կհասնենք, վորովհետև մեզ զեկավարում ե մարդկության առաջավոր ջոկատ—Կոմունիստական կուսակցությունը, և ժողովուրդների հանձարեղ առաջնորդ ընկեր Ստալինը, միայն պետք ե աշխատել, սովորել, գործել և պայքարել այդ նպատակի համար:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

b2

Ներածություն	5
Պատմական ակնարկ քերքատվության բարձրացման մասին	9
Մեր հողային պայմանները և հնարավորությունները	34
Ազոտի, ֆոսֆորի ու կալիումի խնդիրը	43
Հողի պարարտացման մի քանի խնդիրների մասին	51
Հողի հումուսը և որգանական պարարտանյութերը	56
Հողն ու ջուրը	64
Եւ ինչ և հարկավոր	67

Պատմագիր՝ Ն. Բատիկյան  
 Տեխ. խմբագիր՝ Վ. Մանուկյան  
 Լեզվ. խմբագիր՝ Ռ. Տռնյան  
 Սրբագրիչ՝ Կ. Կառավարով  
 Կոնտրալ. սրբագրիչ՝ Ա. Շահբարդյան

Հանձնված և արտադրության 21/VIII 1940 թ.

Ստորագրված և տպագրելու 15/X 1940 թ.

Վ. Ֆ. 2210. հրատ. № 72, պատվեր № 204,

Տիրամ 1000, Փարմաս 60×84, 4<sup>3</sup>/4 տոլ. մամուլ

Արմենիա-ի հրատարակչության տպարան, Երևան, Անինի փ. 67

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.



FL0009139

ԳԻՆԸ 2 ՐԱՄԲ.

A 17739